№ 1 (179) XVII ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍԱՐ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

Հ. Յ. Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

(Սազմակերպական ազդ)

Հ. Յ. Դաշնակցութեան Դ-րդ Ընդհանուր Ժողովի բացումը մօտ լինելով՝ վերջին անգամ հրաւիրում ենք մեր կազմակերպութեան պատկանող բոլոր մարմիններին և ընկերներին, շտապել ուղարկելու ժողովին իրենց առաջարկներն ու ծրագիրները, ինչպէս և գանգատներն ու բողոքները, խմբական թէ անհատական, որպէսզի կազմակերպութեան բաւական ատեանի առջև լիակատար ամբողջութեամբ պատկերանան գոյութիւն ունեցող տրամադրութիւններն ու հոսանքները։

Ժողովի կազմի վերաբերմամբ թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար, հարկ ենք համարում յիշատակել „Կազմակերպական կանոնների՝" խնդրին վերաբերեալ հետևեալ յօդուածները.

102.—Ընդհանուր Ժողովին կը մասնակցին կազմակերպութեան բոլոր Կեդրոնական կոմիտէները, որոնց կազմը և գործունէութիւնը նուազագոյն պահանջներուն կը համապատասխանէ։

103.—Բիւրոները և Պատասխանատու մարմինները կ'ունենան մի-մի ձայն։

104.—Դաշնակցական ուսանողութիւնը (Ռուսաստանի և Արտասահմանի) ձայն կը ստանայ Ընդհանուր Ժողովին մէջ, եթէ ունենայ որոշեալ ցենդը։

106.—Բիւրո մը և իր շրջանի մէկ Պատասխանատու կոմիտէն՝ փոխադարձ համաձայնութեամբ՝ կարող են Ընդհանուր Ժողովի՞ հրաւիրել հեռու տեղեր գտնուող այնպիսի ընկերներ, որոնք իրենց յեղափոխական գործունէութեամբ այդ մարմիններուն որոշ երաշխաւորութիւն կը ներկայացնեն՝ Ընդհանուր Ժողովի որոշումներուն զգալապէս նպաստելու։ Իսկ Ժողովի գումարման վայրը կամ անոր մօտ գտնուող այդպիսի ընկերներ՝ անպայման Ընդհանուր Ժողովը միայն կարող է հրաւիրել։

Ընդհանուր Ժողովի փակումից անմիջապէս յետոյ (յօդ. 118), իրաւասու օրգանների ձեռքով՝ Ժողովի որոշումները կը հաղորդուեն ի գիտութիւն կուսակցութեան բոլոր մարմինների։

Հ. Յ. Դ.
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1907, Յունիսիր.

ԱՍՏԻԱԾՆԵՐԸ ԳԼՈՐԻԱԾ

Նոր տարեջրջան

Արեան և դիակների միջով անցանք, շրջապատուած տանջանքի և ռազմերգի հնչոցներով, դիմացը՝ լքման և յոյսերի խառնուրդ, յետևը՝ ողբ և աւերմունք...

Դա աշխարհակալի աւերմունք չէր, և ոչ էլ յեղափոխութեան յաղթանակ, այլ սոսկաբեր մի խառնուրդ բերկրանքի ու վշտի, յաղթանակի և պարտութեան: „Պատմութեան“ սովորական շարունակութիւնը չէր այդ՝ բռնապետութեան երկրների մէջ, այլ մի անսովոր խոտորումն, բնորոշ յատկանիշը անցած երկու տարուայ...

Եւ նոր տարին—պէտք է խոստովանել անկեղծօրէն—հանգստութեան ու խաղաղութեան աւետաբերը չէ, այլ վշտահար ականատեսը արեան, հալածանքի, քաղցի և պայքարի, դժբախտ վկայ՝ մի իրականութեան, որ սարսափ է ազդում թոյլերին, և մռայլ խոհեր՝ անհեռատեսներին ու քաղաքական միամիտներին..

Քաղաքական այդ միամիտների դէմ է, որ ըմբոստանում է նոր տարին, գալիք օրերի բոլոր յոյսերով և անցածից ժառանգ մնացած կարևորագոյն փաստերով: Ըմբոստացումն այն ցնորական միամտութեան դէմ, որ յաւակնում է յեղափոխել՝ առանց արեան, տապալել դարերով սրբագործած մի ռէժիմ՝ առանց կռուի, փոխել հին կարգերի մի ամբողջ սիստեմ՝ առանց ցնցման և զոհերի...

Երբ Պլեվէի փշրտանքներով Պետերբուրգեան մայթերը ողողուեցին, երբ „ստրուկ“ Կովկասում ըմբոստ յեղափոխականը ռումբի տարափ սկսեց բռնաւորների դէմ, և կամ Փոքր-Ասիայի խոնարհ քաղաքներում հայդուկի դաշոյնը փայլատակեց,—ամենքն էլ, և՛ հանգիստ քաղքենին, և՛ լռակեաց շինականը, և՛ աղօթարար վեղարաւորը, բերկրանքի տաղեր հնչեցրին, ոգևորութեան ծափեր զարկեցին յեղափոխութեան հասցէին, միամտաբար համոզուած՝ որ ահա, տարին չը բոլորած, Ռուսային պալատում ժողովրդական վեհապետութիւնը կը բազմի, իսկ միւս բռնաբաններում՝ սահմանադրութեան Ոգին...

Սակայն թշնամին, այդ անարգ ծնունդը դարերի ու պատմութեան, հզօր ներկայացուցիչը տիրող կարգերի, զիջելու տրամադրութիւն չ'ունի և չէ էլ կարող ունենալ: Կեանքի բնազդը խորն է ոչ միայն անհատների, այլ և հասարակական կարգերի մէջ: Եւ կռիւը անխուսափելի: Ամեն մի քայլ դէպի թշնամին՝ արիւն է պահանջում, ամեն մի յաղթանակ՝ զոհեր:

Այդ արիւնն ու զոհերը տուեցինք, արիւն առատ և թանկագին, զոհեր բազմաթիւ և կարևոր—բայց ոչ առանց հատուցման և յաղթանակի: Ժողովրդական տանջանքի փոթորիկն էր, որ ցնցեց աստուածների գահը, և նրա արեան մէջ է որ խեղդւում է դարերի վիշապն ու անսխալականութիւնը...

Երկու տարի առաջ պլեվէականութիւնը համարւում էր անմահական: Ռուսային պալատն օրուայ տէրն էր, Ցարիզմը՝ աղբիւր ժողովրդի հաւատի, յարգանքի և մտածողութեան: Միապետութեան աստուածն էր, որ փառապանծ թագաւորում էր և՛ Պետերբուրգ, և՛ Թէհրան, և՛ Ստամբուլ,—դարևոր հարևաններ ոչ միայն աշխարհագրապէս, այլ և բռնութեան հանգանակով...

Սերունդների անդուլ, հսկայական, մաշող աշխատանք և զոհաբերութիւն էր հարկաւոր՝ ցնցելու ստրկութեան, քաղցի և տգիտութեան մէջ քարացած ժողովուրդը, և նրա շլինքին նստած անսիրտ ու անխիղճ տիրապետութիւնը: Միտքը սառած էր, պայքարի արիւնը՝ լեռդացած: Ամեն տեղ երկիւղ: Երկիւղ աստուծոյ, երկիւղ թագաւորի առջև. երկիւղ համազգեստի, երկիւղ ծագման առջև. երկիւղ օրէնքի, երկիւղ ապօրինութեան առջև...

Ցեղափոխական փոթորիկը հնչեց...

Եւ այժմ այդ „աստուածները“ այլևս չը կան. նրանք գլորուած են, ընկած իրենց բարձրութիւնից, դիմակազուրկ, ամբողջ մերկութեամբ: Ստրկական երկիւղի փոխարէն՝ տիրում է ըմբոստութեան ոգին. ժպիտ այն դէմքերին, ուր երբեմն ահ ու սարսափ էր նկարուած. արհամարհանք այն վայրերում, որոնք հպատակութեան ու լռութեան օջախներն էին...

Աստուածները գլորուած են:

Եւ այդ „աստուածների“ զէնքը՝ կնուտն ու բանտը, աքսորն ու տանջանքը, այնքա՜ն առատ և այնքա՜ն հնարամիտ, այլ ևս սոսկումն չէ ներշնչում, այլ բողոք ու ըմբոստացում: Եւ այս բոպէիս, բռնութեան և խուլիգանային նախագգուշութեան ճիրաններով սղմուած Ռուսաստանը դրա փայլուն ապացոյցն է տալիս—դումայական նոր ընտրութիւններին՝ ժողովրդական վրդովմունքը յարաճուն կերպով թեքւում է դէպի ձախ, միշտ դէպի ձախ, հակառակ Ստոլիպինեան դաւերին ու սաստին, հակառակ ոստիկանական անլուր ճնշումներին..

Եւ այդ համատարած ըմբոստացումը,—որ յաղթականօրէն դուրս է գալիս աւերակ գիւղերի ու արիւնոտ քաղաքների միջից, որ բարձրացող արևի նման քայլ առ քայլ իր փայլն է տարածում ողբի և տանջանքի երկրների վրայ—Ժողովրդական տանջանքի և ցեղափոխական պայքարի պտուղն է, ծնունդը երկու տարուայ քաղաքական անմոռաց ցաւերի:

Դա մեր լաւագոյն հատուցումն է, փոխարինութիւնը գերմարդկային տանջանքների, ամենամեծ գրաւականը՝ աներկբայելի և վճռական յաղթանակի:

Նոր տարուայ հաւատամքը—այդ յաղթանակն է:

ՀԱՄԱԿՐԱՆՔԻ ՁԱՅՆ

Շնորհակալութեան ջերմ զգացմունքով է, որ տպագրում ենք „Դրօշակի“ մէջ նուչակաւոր գիտնականի այս հակիրճ, բայց խրախուսական տողերը: „Կուզէի աւելի երիտասարդ լինել, որպէսզի կարողանայի ձեզ օգնել տարբեր կերպով...“—այդ անմոռան բառերը, արտասանուած 70-ամեայ ծերունու բերանից, լաւագոյն վարձատրութիւնն են բոլոր նրանց համար, որոնք Ժողովրդական դատին զոհ են բերում իրենց երիտասարդ կեանքն ու ծաղիկ ոյժերը:

Հայկական կոմիտէին

Չը կայ Եւրոպայի մէջ արտի տեր մարդ մը, որ չը վրդովուի հանդէպ այն վայրագութիւնների, որ քիւրդերը ի գործ կը դնեն Հայաստանի մէջ, կանխամտածուած ընդհատումներով, և այս՝ Թիւրք կառավարութեան ակնյայտնի աջակցութեամբ, որ կ'ապացուցանէ ոչ միայն անբարոյականութիւն, այլ նաև կոպիտ տգիտութիւնը այդ կառավարութեան, որ ուզելով ուրիշները զրկել, ինքզինքը կը հարուածէ:

Այդ նոյն կառավարութիւնն է, որ սեփական ձեռքով կ'աւերէ միակ նահանգը, ուր կուլտուրան, արդիւնաբերութիւնն ու վաճառականութիւնը յարգանք կը վայելեն, և այս՝ սիրաշահելու, քիչ ժամանակուայ համար, բարբարոս գազանները, որոնցմէ ոչ մի օգուտ չէ կարող ակնկալել:

Բայց իր սեփական հարստութիւնները կամովին ոչնչացնելով, Թիւրք կառավարութիւնը չը վարւիր միթէ այն խենթի պէս, որ իր սեփական սենեակը կ'այրէ՝ անոր հրդեհը տեսնելու համար:

Կ'ուզէի աւելի երիտասարդ լինել, որպէսզի կարողանայի ձեզի օգնել տարբեր կերպով, քան թէ խօսքերով և գանդատներով...

Ձեր գործին կը բարեմաղթեմ կատարեալ յաջողութիւն և ձեր արամագրութեան տակ կը դնեմ իմ հանդէսը:

ՉԷԶԱՐԻ ԼՕՄԲՐՕԶՕ

ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԵԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՂՆԵՐԸ

(Թարգմանուած ֆրանսերէն ձեռագրէն)

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Երբ Գլադստոն իր հռչակաւոր Նամակներով Եւրոպայի նողկանքին կը յանձնէր Նապոլիի Բուրբոնների կառավարութիւնը—որուն Աստուծոյ բացասութիւն անունը կուտար—իր ցասմնոտ դատապարտութիւնը բոլոր արտերու մէջ յուզումնալի արձագանք կը գտնէր, և այդ արձագանքը՝ շատ չանցած՝ գործի կը փոխադրուէր. քիչ տարիներ յետոյ՝ Ֆրանսիան իր զէնքով կը պաշտպանէր իտալական յեղափոխութիւնը և անգլիական երկու մարտանաւերու հսկողութեան տակ՝ տեղի կ'ունենար հազարներու մուտքը Սիցիլիա:

Աւելի ուշ նոյն նախատեսողը, արդէն ծերացած և փառքին գագաթնակէտը հասած, կամբասանէր, իր պերճախօսութեան բոլոր փայլովը, Կ. Պոլսոյ ոուլթանը և զայն Մեծ-Մարդասպան կը յորջորջէր: Սակայն դժբախտաբար, այս անգամ իր ամբաստանութիւնը ոչ մի ցնցում չ'առաջացուց: Եւրոպան անոր ձայնը չը լսեց և ընդհակառակը Օսմանեան վայրագութիւնները այնուհետև հետզհետէ բազմապատկուեցան և աւելի ստոր դարձան: Այս ձայնը չը կրցաւ արգիլել Ստամբուլի արիւնածարաւ-Բորենին՝ յարձակելու ամբողջ Ժողովրդի վրայ և բարբարոսաբար բնաջինջ ընելու երիտասարդները, մանուկներն և ծերերը՝ անմեղ քաղաքակրթուած և դիւանագիտական Եւրոպան չը շարժուեցաւ և բացի վախկոտ ու լիովին պլատոնական բողոքէ մը, ոչ մի կերպ չը սանձեց անարդ և ստոր բռնաւորը:

Աւա՜ղ, Անգլիան շատ ու շատ է զբաղուած իր Ափրիկեան սխալներու հետևանքներով, Ֆրանսիան շատ է խորասուզուած իր գաղութներու և նուաճումներու հոգսերու մէջ, որպէսզի կարողանան լսել աղաղակները նահատակուող հայերուն և ժխորը հայաջինջ ջարդերուն:

Անհաւասիկ եւրոպական յաղթութիւններու դինը: Ահա թէ ինչ կերպով իմպերիալիզմը արտերը կը ցամքեցնէ և մտքերը կ'ապականէ: Ահա թէ ի՛նչպէս անիկա կը շեղէ այն ազդերը, որոնք աշխարհը քաղաքակրթելու կոչուած են: Եթէ առաջ կ'ըսէին, „Թո՛ղ կորչին գաղութները, քան թէ սկզբունք մը“, այժմ մենք հարկադրուած ենք բացագանչել՝ „Թո՛ղ կորչին գաղութները, որպէսզի սկզբունքները ազատին“: Այո՛, թո՛ղ կորչին գաղութները, որովհետև անոնց պատճառով է, որ քաղաքակրթուած ժողովուրդները կը բարբարոսանան, որովհետև անոնք են, որ կարգիլեն յառաջադէմ ազգերը՝ սանձահարելու բարբարոս վեհապետները և վերջ տալու անոնց ոճիրներուն:

Ժամանակ է, որ եւրոպական պետութիւնները վերջապէս մտնեն իրենց բնական սահմաններու մէջ և անկից դուրս գան ո՛չ թէ չարաղէտ տիրապետումներու, այլ սրբազան խաչակրութեան մը համար՝ յօգուտ բոլոր դժբախտներու և հարստահարուածներու: Թող դուրս գան այս վեհ նպատակի համար, և այն ատեն ամբողջ աշխարհը հանդիսատես պիտի լինի ծագմանը իսկական քաղաքակրթութեան, խաղաղ, շինարար և մշանջենական:

ԱՔԻԼ ԼՕՐԷԱ
Պրոֆէսոր—Սոցիոլոգ

„ԴՐՕՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

Թիֆլիս, յունուար 8

Էրզրումից եկած լուրերին նայելով, քաղաքը թէև արտաքուստ խաղաղ է, բայց կառավարական ճնշման դէմ պաշտպանելու ծգտումը շարունակում է խմորել: Նորեկ կուսակալը զգուշանում է բարդութիւններ առաջ բերելուց և մեղմութեամբ յորդորում է շախի-վէրկիսին վճարել. ժողովուրդը դիմադրում է: Հայերի և Թիւրքերի յարաբերութիւնը քաղաքում լաւ է: Գաւառի հայ ժողովրդի վիճակը աւելի վատացաւ. Ռուսաստանից եկած Թիւրք գաղթականներին կառավարութիւնը տեղաւորում է դաշտի հայ գիւղերում, Բասեն և Խնուս: Թիւրքերի ներկայութիւնից նեղուած՝ շատ հայ գիւղացիներ՝ իրենց տները թողած, լեցուել են քաղաք, մերկ, քաղցած, անպատսպարան: Գիւղացիները սոսկալի դէպքեր են պատմում Թիւրք գաղթականների վայրագութիւններից: Դրանց քաջալերողը, ինչպէս միշտ, կառավարութիւնն է: Գիւղական շրջանում սկսուած է մի վտանգաւոր շարժումն՝ գարնանը գաղթել դէպի Կովկաս: Կ. Պոլսի կենտրոնական կառավարութիւնը միջոց չէ խնայում այդ շարժումը արագացնելու:

———

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

ՊԻԹԼԻՍ, Նոյեմբեր 22

Քանի մը շաբաթ առաջ, Պիթլիսէն 4 ժամ հեռու, Մոճկոնք գիւղի մէջ սպանուեցաւ նոյն գիւղացի երիտասարդ մը հետևեալ պարագաներուն տակ։ Վատահամբաւ կին մը խեղդուած կը գտնուի նոյն գիւղէն քիչ մը հեռու՝ դաշտին մէջ, ուր վերջերս Խիզանի Սէյիդ Ալի գաղանը սքանչելի բնակարան մը շինած էր։ Սէյիդ Ալիի ծառաները, որոնք կը վայելէին վերը յիշուած կնոջ հրապոյրները, բոլորովին անհիմն ենթադրութիւններով կը կասկածին Մոճկոնքցի երիտասարդին վրայ, կը կոխեն անոր տունը և չուան մը անոր վիզը ձգելով՝ դէպի դուրս կը քաշեն. հոն ժամու մը չափ չարաչար ծեծելէ յետոյ՝ հալած ու եռացրած իւղ կը լեցնեն բերանը և դաշոյնի հարուածներով կը լմնցնեն գործը։ Օրերով ոչ ոք չի համարձակուեր դիակին մօտենալ՝ արիւնկղակ քիւրդերու ուշադրութիւնը իր վրայ չը գրաւելու համար։ Եւ ի՞նչպէս համարձակին մօտենալ անոր դիակին, երբ քիւրդերը համոզուած են, թէ ոչ միայն անպատիժ պիտի մնան, այլ և սուլթանական պատիւներու պիտի արժանանան։ Պաշտօնական ազգականներու կողմէ դիմումներ եղան։ Այս ողբերգութեան ականատես բարեխիղճ քիւրդ մ'ալ պատրաստ էր վկայելու ճշմարտութիւնը։—Բայց դատարանը „վկաներու չգոյութեան պատճառաւ", չուզեց լսել խնդիրը։ Այս ողբալի պարագաներու մէջ հայը դարձեա՞լ պիտի դիմէ ոճրագործներուն՝ արդարութիւն հայցելու...

Մի ուրիշ իրողութիւն, ողբերգական իր մանրամասնութեանց մէջ։ Պիթլիսէն ժամ մը հեռու, դէպի հարաւ, գիւղ մը կայ, Բարխանդ անունով, բոլորովին հայաբնակ։ Գիւղին առատ ջուրերը, արգասաւոր հողը, ընդարձակ արօտատեղիները և, մանաւանդ, քաղաքին արուարձան մը լինելու իր առաւելութիւնը՝ կուածաղիկ մը դարձուցած են զինք Պիթլիսի քիւրդ աղաներու աչքին։ Հողերու գրաւման և գիւղի ընդհանուր տիրապետութեան համար քանի մը տարիէ իվեր խուլ և կատաղի պայքար մը կը մղի Զէյտանցի Իսուֆ աղայի և Զայկար Օղլի Ահմէդ աղայի միջև։ Խաղաղ հայ գիւղի մ'արիւնն ու քրտինքը ծծող այս աղաներու հակամարտիկ գործակալները, սև հարիւրակային խմբակ մը, հանգիստ ու դադար չեն տար գիւղացիներուն։

Առնենք վերջին դէպքը։ Ասկէ քիչ առաջ, Իսուֆ աղայի համբաւաւոր պաշտպանեալը՝ Հայտարօյի Խալաֆը, յայտնի ոճրագործ, Բարխանդ կերթայ՝ հրահանգուած իր աղային, բռնադատելու Մարկոս անուն գիւղացի մը՝ որ իր արտերը Ահմէդ աղային ծախելու փոխարէն, Իսուֆ աղային ծախէ, 120 լիրայով։ Գիւղացին կը մերժէ առաջարկութիւնը՝ պնդելով թէ՝ իր արտերը ծախելու դիտաւորութիւն բնաւ չ'ունի։ Ասոր վրայ Խալաֆ գաղանի նման կը կատաղի, հրացանի կոթին տակ կ'առնէ ինքնապաշտպանութեան միջոցներէ զուրկ գիւղացի երիտասարդը և այնչափ կը զարնէ, որ խեղճը անզգայ գետին կ'իյնայ։ Իրենները զինք փրկելու յոյսով՝ նոր մորթուած ոչխարի մը մորթի մէջ կը փաթթեն անզգայացած դիակը։ Բայց հակառակ ամեն խնամքներուն, երիտասարդը մեռաւ քանի մ'օր առաջ։ Ահա իր հողին փարած նահատակ մը ևս։

Ո՞վ կը համարձակի բողոքել Խալաֆին դէմ. բողոքողը անպայման հանգուցեալի բաղդին կ'արժանանայ։ Անպատիժ իր ոճիրներուն համար՝ Խալաֆն այժմ ընկած է նոյն գիւղացի ուրիշ հայու մը ետևէն՝ հարկադրելով զայն իր հողերը Իսուֆ աղային ծախելու։ Սարսափահար գիւղացին կ'առարկէ թէ միմիայն արտերու բոլորտիքն աճած ծառերը հիմայ հարիւր լիրայէ աւելի կ'արժեն, ի՞նչպէս կրնայ արտերը քառասուն լիրայի տալ։ Եւ Խալաֆը ժամերով գիւղին ճամբուն վրայ կը սպասէ՝ գիւղացին մէջտեղէն վերցնելու համար...

Պատժական ո՞ր շրջանին կամ ո՞ր երկրին ժամանակագրութեան պէտք է դիմել նմանօրինակ անգթութիւններ ու բռնութիւններ գտնելու համար։ Դեռ ասոնք նմուշներ են՝ առնուած ամենօրեայ դէպքերէն, որոնք կը կատարուին վիլայեթներու նստած կ ե դ ր օ ն ն ե ր ո ւ ն մէջ։ Կրնաք երևակայել, թէ ինչեր կը կատարուին խուլ անկիւնները։

ՀԱԼԱԾԱՆՔԻ ՆՈՐ ԴԷՊՔԵՐ

ՏՐԱՊԻԶՕՆ, Նոյեմբեր 3

Հոկտեմբերի 10-ին Կիրասօնէն հոս կը բերեն եօթն հայ բանտարկեալներ. Յարութիւն Էվրանեան, պաշտօնեայ ֆրանսիական նամակատան, Հայկ-Ալրամ Գարակէօզեան, Յովհաննէս Յովհաննէսեան, Նորիճան և ուրիշ երկու երիտասարդներ, որոնց անունը չը կըրցանք գիտենալ։ Ասոնք ամենաչնչին պատճառով բանտարկուելով՝ շատ չարչարանքներու ենթարկուած են, որպէս զի ըսեն թէ իրենք յեղափոխականներ են. Կիրասօնի գայմագամը և ոստիկանապետը, որոնք կաշառակեր և զզուելի պաշտօնեաներ են, գործին ահագին մեծութիւն մը տալով՝ Պոլիս իմացուցին՝ կարևոր բան մը գտածի պէս և հարցաքննութեան թղթերը փոխանակ, ըստ օրինի, Տրապիզոնի ամբաստանեալ ատեանին ղրկելու, Պոլիս առնել տուին, ուր երկար սպասելէ յետոյ՝ դարձուեցան Տրապիզոն և հոս ալ յիշեալ ատեանը խնդիրը յանձնեց եղեռնագործ դատարանին (մահբէմէի իսթինաֆ)։ Այս որոշման վրայ՝ բանտարկեալները փոխադրուեցան Կիրասօնէն հոս և պիտի դատուին իբր ոճրագործներ։ Սակայն, ո՞վ գիտէ, ե՞րբ և ի՞նչ կերպ։

Պարսկահայ վաճառական մը՝ Տիգրան Խան, որ պարսիկ կառավարութեան կողմէն ներկայացուցիչ խրկուած է եղեր Եւրոպական քանի մը ցուցահանդէսներու, Շահին տղայէն յանձնարարութիւն կ'ստանայ՝ իրեն 5 հատ բէվոլվէր խրկելու։ Վաճառականը գնելով ուզածները և իր բեռներուն մէջ դնելով զանոնք՝ ճամբայ կը հանէ։ (Ի դէպ, Եւրոպայէն Պարսկաստան խրկուելիք ապրանքները Տրապիզոն ցամաք կը հանուին և մաքսատան կողմէ կնքուելով կը փոխադրուին ուղղակի Պարսկաստան)։ Վաճառականը իր հակերը կը խրկէ յանձնակատար Մինասեանին և մաքսատան մէջ բոլոր հակերն ալ բացուելով՝ անոնցմէ մէկին մէջէն կ'ելլան 5 ատրճանակները իրենց փամփուշտներով։ Մաքսային վարչութիւնը 20 ոսկի տուգանք գանձելէ յետոյ, իրողութիւնը

կ'իմացընէ կառավարութեան և Մինասեանը կը ձերբակալուի, որ ծայրայեղ պահպանողական և հակայեղափոխական մարդ մ'է։ Այս մարդը անցեալ տարի ալ քանի մ' ամիս բանտը մնացած էր այս տեսակ խնդրի մը համար, և յետոյ երեք ընկերներու հետ Պոլիս տարուելով՝ հոն դատավարութեամբ անպարտ արձակուած էր, օտար դեսպանատան ջանքերուն շնորհիւ։ Երեւակայեցէք, որ օտար երկրէ մը ապրանք կուգայ օտար երկիր մը երթալու համար ու այդ ապրանքը կը խրկուի փոխադրութեան միջնորդի մը, որ ապրանքին տէրը չէ և հակերուն մէջ դրուածին ոչ մէկ կերպ պատասխանատու է և այդ ապրանքներն ալ ոչ թէ կը փախցուին, այլ ուղղակի մաքսատունը կը տարուին նաւէն հանուելով. քննութեան ատեն քանի մը ատրճանակ ու փամփուշտ կը գտնուի մէջը, և ահա ատոր համար կը բանտարկեն փոխադրութեան միջնորդը։ Ասիկա միմիայն Սուլթանական բէժիմով կրնայ բացատրուիլ։ Հարցաքննիչ-դատաւորը նախնական քննութիւնը կատարելէ յետոյ, թղթերը կը յանձնէ ամբաստանիչ ատեանին, որը քիչ մը խելք ու խիղճ կ'ունենայ, շնորհիւ ձեռք առնուած ջանքերու, մէնը մուհաքէմէի վճիռ տալու, որով ազատ կ'արձակուի Մինասեանը, և ինչպէս վերը յիշեցինք, արդէն Պոլսի եղեռնագատ դատարանը նոյն օրինակ խնդրի մը համար անպարտութեան վճիռ արձակած էր անցեալ տարի։

Անդին, քաղաքէն քանի մը ժամ հեռաւորութեան վրայ՝ Էօմրայի ծովեզերքը, Տրապիզոնցի թիւրք նաւավար մը 6—700 քիլօ վառօդով բեռցած նաւակը ցամաք քաշած ժամանակ, կը հանդիպի կառավարութեան հսկող նաւակին, և կաշառքի սակարկութեան մէջ անհամաձայնութիւն ծագելով՝ գործը պաշտօնականի կը թափուի և նաւակը կը գրաւուի իր բեռովը. ձեւի համար ալ երկու նաւաստի միայն կը ձերբակալեն։ Ստոյգ աղբիւրէ տեղեկացած ենք, թէ հարուստ և դիրքի տէր տաճիկ վաճառականներ միշտ Ռուսաստանէն գաղտնի վառօդ բերել տալով՝ հոս կը ծախեն թիւրք տարրին, ահագին շահեր ընելով։

Տրապիզոնէն տաս ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուի Զարտախլը կոչուած եայլան, ուր ամառը հայ և թիւրք գիւղացիներ կը գաղթեն։ Քանի մի ժամանակ առաջ թիւրք աւազակներ այդ եայլան երթալով՝ իրենց հետ կ'առնեն ու կը տանին հայերին պատկանող իրերը։ Նոյն ամսոյն 25-ին երկրորդ անգամ կ'այցելեն ու եզ մը մորթելով՝ կը տանին հետերնին։ Իսկ օգոստոսի 8-ին, դարձեալ գալով՝ բոլոր գտածնին կը տանին։ Աւազակները միայն տան մը մէջ անսպասելի արգելքի մը կը հանդիպին,—կտրիճ կիներ Զարդար ու Մարիամ, Կրօմիլա գիւղէն, մէյմէկ կացին ձեռքերնին, դրանը վրայ սպասելով՝ չեն թողուր որ իրենց տունն ալ մտնեն։ Աւազակները այս դիմադրութեան հանդէպ ալ կը բուելով, հրացանի կոթով ու փայտով զանոնք ծեծելէ յետոյ, անոնցմէ մին ալ կը վիրաւորեն ու կը հեռանան, սակայն առանց կարենալու բան մը տանելը։ Հայ գիւղացիք դատելով որ կառավարութեան գանգատիլը ոչ մի օգուտ չ'ընծայելէ զատ, կաշառքի ալ դուռ պիտի բանայ, աւելորդ համարեցին դիմում ընելը։

ՄՂԵՐԴ, Նոյեմբեր 23

Սուլթանական իրատէներն ու հրամանները, բնական է, „եղիցի" բառով միայն չեն իրագործուիր, այլ հրաշագործ դրամով, որ գանձարանին մէջ գոյութիւն չունի, ուստի և ժողովրդի գրպանին մէջ կը փնտուի... Թշուառ ու անկուտի հայերը, անկարագրելի խայտառակութեանց ու չարչարանաց առարկայ կ'ըլլան։ Փէդայիներու դէմ դնելու նպատակով կազմուած հեծելագունդերու՝ (սէֆարա) ենիչերիներու նորաձև տիպ հրէշներու՝ համար չարչարանքներու ուէֆ ձև անծանօթ չէ—տունը կոխել, բրածեծ ընել, երեսը աղտեղութիւններ քսել, նոյնիսկ կերցնել, աւաւակներու անմաքուր ջուրէն խմցնել, սովորական բաներ են. կահկարասիք, տուն ծախել էլ կայ։ „Երբ սուլթանին սիրասուն զաւակները" այս ցուրտին ու բուքին ճամբորդելով՝ իրենց ոտքերու միսը, աչքերու լոյսը ձիւնին կը կերցնեն, խը նգիր հայը, քրիստոնեան ի՞նչպէս չը զոհէ իր կայքը, տունը, կինը և ամէն ինչը"—կ'ըսեն թուրքերը, որոնց կատաղութիւնը իր ծայրագոյն աստիճանին հասեր է շասսի (անձնական) տուրքին պատճառով։

Քրիստոնեաներու վարքն ու բարքը շտկելու, զիրենք չարութենէ զգուշացնելու համար, դժոխքի տանջանքները քստմնելի բառերով նկարագրողներն եթէ մարգարէութեան շնորհ ունեցած ըլլային, այնչափ զօր չէին տար իրենց ուղղին՝ սարսափեցնող բառեր գտնելու համար։ Շատ սխալ են, երբ կ'ըսեն թէ „ոչ աչք տեսած է և ոչ ոք կրնայ երևակայել"։ Թող անգամ մը Պիթլիսի կուսակալութեանը մէջ գտնուին, այն ատեն պիտի համոզուին թէ՝ դժոխքը հոս է։ Տարտարոսապետ կուսակալը դուլ ու դադար չունի՝ սատանան զարմացնելու աստիճան...

Սուլթանը համոզուելով՝ որ հայերն այլևս չեն կրնար հայթայթել այն գրամը, որ պիտի ծառայէ իր յարաճուն ծախքերուն, անդրադարձաւ իր մեծ սխալին ու երեսը դարձուց դէպի աշիրէթապետներն, որոնք մէյմէկ սուլթաններ են այս կողմերը։ Քանի մը ամիսէ ի վեր Սղերդի Ղարզան գաւառակին գիւղերը կաւրշոկեն զօրքն ու սէֆարան. ցորեն, ոչխար, հաւ չը թողուցին խեղճ ժողովուրդին քով։ Սուլթանին այս ընթացքը կը յիշեցնէ այն խելացի հովիւը, որ ոչխարներէն աւելի շուն կը պահէր ու նկատելով որ ոչխարաց կաթով չը կրնար կշտանալ ու կշտացնել իր շունները, կամաց-կամաց ոչխարները մորթել սկսաւ՝ իրեններով կշտանալու համար, ու երբ ոչխարները հատան, սկսաւ շունները մորթել՝ ուտելու, կշտանալու համար։ Տեսնենք շուներն ալ հատնելէ վերջ՝ ի՞նչ կ'ընէ...։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

ՂԱՓԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

(Ընդհանուր տեսութիւն)

1906 թուի օգոստոսի 2-ից մինչև սեպտեմբերի 12-ը ամբողջ Ղափանը ներկայացնում էր մի պատերազմական թատերաբեմ, մարդկային զոհերի մի հսկայական սպանդանոց։ Կատաբուում էր ամենահռելի ողբերգութիւններից մէկը։ Երկու տարրերը՝ թուրքերը և հայերը՝ առաջինները իբրև սկսողներ, վերջինները իբրև պատասխանողներ, արբեցած

միմեանց կոտորելու, միմեանց փչացնելու, վայրենի ինտինկաներով, գործում էին անլուր վայրագութիւններ և բարբարոսութիւններ։ Մարդիկ միմեանց համար homo homini lupus։ Երեխաների, պառաւների, ծերերի, լլկած աղջիկների ոդրն ու կոծը. ցորենի այրուած ամբարներն, խոտի դէզերը, ցորենի և գարու ոտնահարուած, արորուած արտերը, տարիների ընթացքում քրտինքի գնով վաստակած հարստութիւններն և տնտեսութիւնները քառասուն օրայ ընթացքում աւերուեցին և ոչնչացան. շէն ու հարուստ գիւղերը ներկայայնում են մի մի մոխրակոյտեր։ Գրիչը անզօր է նկարագրել Ղափանի Թուրք-հայկական կռիւների տխուր պատկերը. Ղափանի անմատչելի լեռների, ձորերի ու խիտ անտառների միջից սև ամպի նման բարձրացող ծուխը, երկու կողմերից սլացող հրաշէկ գնտակների ճարճատիւնը, կանանց և երեխաների արտաշարժ, ողէկուսր ճիչն ու ողբը, արիւնռուշտ հօրդաների „Եա Ալի, եա դրբախ, եա գրբրլախ“ գոռում գոչումները, մեր հերոս մարտիկների յանդուգն, արիասիրտ, անվեհերութեան կիրքը կրող հարուածները պատերազմական կերպարանք էին տալիս ամբողջ գաւառին։ Իսկ ներկայումս երկու մասսաները անապատան, կիսաքաղցած, վիշերը ծռած, և փլատակների վրայ նստած՝ յուսահատ ողբում են իրենց թշուառ բախտը։

Այդ անլուր բարբարոսութիւնների ամբողջ շրջանում, բուռիս ամենաընդարձակ մոքով, բացակայում էր ռուս կառավարութեան ակտիվ միջամտութիւնը։ Ղափանից 50 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Գորիս քաղաքում միապետութեան դաւադիր ներկայացուցիչները ցնծում, հրճւում և ծափահարում էին, դիտելով գազանային գործողութիւնները։ Այս և այն գիւղում նստած կօզակները հանդիստատես էին սոսկալի տեսարաններին և անտարբեր դիրք բռնած՝ խմում-ծխում էին ու թամաշա անում... որովհետև բիւրօկրատ մարդ-գազաններ այդպէս էին կարդացրել, հրահանգներ տուել։ Ամենամեծից սկսած մինչև ամենափոքր աստիճանաւորը ներշնչած էին պրովոկատորական ծրագրով և երկու ազգերի փոխադարձ ոչնչացման իղձերով։ Դրագունների կօմանդիրներից մէկն ասում էր։ „Եթէ ինձ իրաւունք տային, հայերին և թուրքերին կը բաժանէի հրայաններ և նոյնիսկ թնդանօթներ և կասէի՝ կռուեցէք. իսկ ես այդ ժամանակ կը բարձրանայի մի բարձունքի վրայ դիտելու՝ թէ ինչպէս երկու կողմը միմեանց կոտորում են“։

Սակայն ո՞վ առաջ բերեց այդ տարերային փոթորիկը և ո՞ւմ ձեռքով ներկուեցին Ղափանի լեռներն ու ձորերը։ Արտի դառն կսկիծով և յանուն արդարութեան և ճշմարտութեան ստիպուած ենք արձանագրել, որ առիթ տուողը, նախայարձակ լինողը եղաւ ոգէտ, անգիտակից, ռուս բիւրօկրատիայի ձեռքին կոյր գործիք դարձած Թուրք մասսան, որ միշտ զոհւում է պրովոկատոր բէգերի. խաների, աշխատանքից խուսափող աւազակապետների և այդ օրինակ թշուառականների դաւերին։ Ընդհանրապէս Կովկասեան և մասնաւորապէս Ղափանի հայերը բուռն ճիգեր թափեցին իրենց հարևան Թուրքերի հետ հաշտ ապրելու։ Եւ չը նայած այն բանին, որ յաճախ տուժում էին, այնուամենայնիւ խորը կերպով հաւատում էին կուրացած հարևանի խօսքերին և ամեն կերպ իրենց զսպում՝ չը կամենալով նախայարձակ լինել։

Հակառակ այդ տրամադրութեան՝ անտագոնիզմը լայն ծաւալ ստացաւ Թուրքերի խաւերում։ Թուրք պոռոտախօս ինտելիգենցիան փոխանակ զինելու ազգերի համերաշխութեան իդէալներով, փոխանակ անկեղծ սրտից բղխած կենդանի խօսքերով հասկացնելու և բացատրելու Թուրք հասարակութեան՝ կռիւների կորստաբեր հետևանքները, ընդհակառակը ասպարէզը թողեց պորտաբոյծ, ձրիակեր բէգերին, աղալարներին և հացազուրկ աւազակապետներին։ Դրանք եղան ամբողջ Ղափանի Թուրք ժողովրդի կորստեան, անծայր թշուառութեան նախապատճառները։ Շատերը դրանցից քաջածանօթ են և ներկայումս Թուրք գիւղացու աչքում հանդիսանում են իբրև մի-մի monstrum horrendum որոնց հասցէին ուղղում են հայհոյական էպիտէտներ։ Անտեղի չէ ուրեմն յիշատակել այդ հրէշների անունները, որոնք հաւատարիմ՝ իրենց ոճրագործական ծրագրերին, սկսեցին ամենաեռանդուն ագիտացիա Թուրք մասսայի մէջ և այդ ողբմելի ժողովրդի համար գերեզման փորելով՝ հասցրին մի այնպիսի դժնդակ վիճակի, որ հազիւ թէ նա կարողանայ տասնեակ տարիների ընթացքում վերականգնել իր քայքայուած տնտեսութիւնը։

Ահա փաստերը։ Վերին Ղափանում իր սեփական գիւղի մէջ բուն դրեց Հաջիբէկ Մելիք-Շահվերդ, որ Շարուր Դարալագեազի գաւառական վարչութեան քարտուղարն էր։ Միաժամանակ մուք գործեցին պաշտօնով „ռուս հայրենասէրների“ տիպիք ներկայացուցիչ անասնաբոյծ Կուլիկ և Ղաթարի փոստատան կառավարիչ Ջումշուդ Կուլեով։ Այդ տրիօն պրոպագանդը վերին Ղափանից մինչև Ղափար, Ղարաչիման էր տարածւում։ Հիւսիսից գործում էին Ցանձավերի բէգերը՝ Աբդուլ Ալի բէգ (յայտնի աւազակ, տաժանակիր աշխատանքից փախած), Շիրալի բէգ, Համիդ բէգ Սուլթանօվները։ Ղափան Բարգուշատի կողմից՝ ղուբաթլուեցի Իլդրիմ բէգը, դրա որդի Նախկին պրապորշչիկ Շամիր բէգը և Խանլար բէգը, խօջահանցի Մամադ Հասան բէգը, ջանգիլանցի Աբդուլ Սամադ բէգը, թեմուր բէգ Ջաւանշիրները. Ղարագեօլ գիւղի Աղալար բէգ Ջաւանշիրը, փիրշեվանցի Նազար բէգ Սուլթանօվը. նուազեցի Բահրամ բէգ Մելիք-Աբասօվը, ալիդարեցի Մաշալի Հասան կուլի բէգ Սարմաստբէգօվը և ալադինեցի Բէգլար Միրզա Հասան օղլին։ Ահա Թուրքերի դահիճները, Թուրք ժողովրդի շահերին դաւաճանողները։

Այդ դաւադիրների առաջ բերած ագիտացիայի շնորհիւ՝ դեռ անցեալ տարուանից գլուխ բարձրացրին մի քանի աւազակներ, որոնք մինչև այդ՝ խաղաղ աշխատողներ էին պղնձահանքերում. նիւթական համարելով այդ կոչը, նրանք հեռացան հանքերից և սկսեցին զբաղուել հայերին սպասող այնտեղ որսալով։ Օխչի պղնձահանքերը սանող ճանապարհը փակուց Թուրք կռաթաղեցիների ձեռքով. պատահող հային որսում էին ու նահատակում։ Յուլիսի 31-ին, լոյս օգոստոսի 1-ին, Բեխ գիւղի ամարանոցում սպանուեց հանքային կապալառուների ձիապաններից Խդրանցի Աւագը։ Համբերութեան բաժակը լցուած լինելով, ի պատասխան այդ յանդուգն սպանութիւնների ու թալանների, Ղափանի դաշնակցական ենթակոմիտէի լիազօր Շ...եան, օգոստոսի 2-ին, կարդացրում է զինուորներ՝ Շիկահողեցի Պապին, Հագարակեցի Տիգրանին և Ղարաբաղցի Եապոնին, զինուած թուրքերի պատահելիս զինաթափ անել։ Այդ երեք հոգին. Բարաբաթումբ գիւղի պղիներում, հանդիպում են Ղարաչիման գիւղացիներ Սաֆիեար Բէգ Ջամալ Բէգ Օղլուն, Աստուլլահ Բէգ Հիւսէին Ալի Բէգ օղլուն և Խսկանդար Ահմադ օղլուն։ Սաֆիեար Բէգի մօտ լինում է երկու հարուածանի որսորդական հրացան։ Հայդուկները պահանջում են Սաֆիեար Բէգից հրացանը, բայց նա կտրուկ մերժում է, առաջարկելով հրացանի փոխարէն երկու հարիւր ռուբլի։ Հայդուկները փողի փոխարէն զէնքն են ուզում. Սաֆիեար Բէգը դգալով մօտալուտ վտանգի անխուսափելիութիւնը, գնդակ է արձակում դէպի Պապին, վիրաւորելով աչքերը և երեսը, և սկսում է փախչել Հրազարիի վրա՝ Տիգրանը և Եապօնը գնտակահար են անում Սաֆիեար Բէգին և Աստուլլահ Բէգին ու տեղն ու տեղը սպանում, իսկ Խսկանդարը փախչում է դէպի Ղարաչիման գիւղը՝ Թուրքերին հաղորդելու կատարած դէպքը։ Սիգնագ Թիւրք գիւղով անցնելիս՝ Խսկանդարը պատահում է այդ գիւղայի յայտնի աւազակ Ալախկուլի Բէգ Ջաւադ Բէգ օղլուն և պատմում է եղելութիւնը։ Ալախկուլի Բէգը իր ընկեր աւազակներ Նուրիշի և Բաբաքիշու հետ հրացաններով դիմում են դէպի Մելիք-Ազարեանցի „Սիւնիք“ գործարանը, որտեղ ամենից առաջ հանդիպում են այդ գործարանի հին վետերան վերին Աղուլեցի Մինաս Խօջամիրեանցին և սպառնական շեշտով գոչելով՝ „Սաֆիեար Բէգին տուր, Սաֆիեար Բէգը որ՞տեղ է“, հրամայում են իրան երթալ դէպի գործարանը։ Մինասը ապշած այդ խօսքերից և տեղեկութիւն անդամ չունենալով Բարաբաթումբի պղիներում պատահած անակ-

ընկալ դեպքերի մասին, միամտաբար երեսը շուռ է տալիս դեպի գործարանը երթալու, և այդ վայրկեանին Ալախկուլի Բեգը յետևից գնտակահարում է ու սպանում իր գործարանի դռան մօտ ու յետ է փախչում իր ընկերներով։ Գործարանում, այդ ժամանակ կառավարիչ Փեփվաճեանի հետ միասին, լինում են ընդամենը 8 հոգի, որոնք զնացել էին նախապատրաստական աշխատանքները կատարելու՝ առանց գործարանի ինքնապաշտպանութեան համար կանխօրէն նախազգուշութիւններ ձեռք առնելու, քանի որ, ցաւալի է այդ ասել, ոչ ոք այդ մասին հրահանգ չէր տուել, չէր նախազգուշացրել... Մինասի սպանութիւնից մի ժամ չ'անցած, ամբողջ գործարանը շրջապատւում է հարիւրաւոր թուրքերով՝ եկած գործարանի մօտ գտնուող շրջակայ հետևեալ գիւղերից՝ Ղարագեօլից՝ Աղալար բեգ Ջաւանշիրի ղեկավարութեամբ, Խալաջից, Ինջավարից, վերին և ներքին Գաեալուից, Աղքենդից, Բայդաղից, Թեջադինից, Թուրափխանլուից, վերին և ներքին Գեօգակլուից, Սիզնագից, Սէիդլարից, վերին և ներքին Ղարաչիմանից, Դարգուից և Ալադինի շրջակայ գիւղերից։ Վերջինի կողմերից եկողները լինում են Բեգլար Միրզա Հասան օղլու քրոջ որդոց և իր մարդկանց ղեկավարութեամբ։ Առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամի 9-ը տևում է անհաւասար կռիւը. 13 ժամ չը տեսնուած ընդդիմադրութիւնից յետոյ՝ երկու պահպաններ՝ Զափնի գիւղացի Սամսոն Ոսկանեանցին և խրդրանցի Թադէոս Աբրահամեանցին զոհ տալով, մնացած հինգ հոգին թողնում են պղնձի գործարանը և փախչում դեպի Բարաբաթումբ գիւղը։ Թէ Մինասի և թէ պահպանների դիակները այրուած են։ Թուրքերը մտնելով գործարանը՝ թալանում են բոլոր գոյքը և շինութիւնները կրակում։ Ամբողջ վնասը հասնում է 150000 ր.։

Յաջորդ օրը, օգոստոսի 3-ին, գործարանից ազատուած և շրջակայ գիւղերից եկած երիտասարդները թալանում են վերին Ուչքար-չայի Բազարի թուրք խանութները, որոնց տերերը փախել էին մօտակայ թուրք գիւղերը և կրակում են թուրքերի անները։ Այդ նոյն օրը յարձակւում են Քարխանա թուրք գիւղի վրայ և շատերին սրախողխող անում (գիւղը բաղկացած էր 40 տնից և յայտնի էր ինչպէս սիֆիլիտիկական վարակման բուն)։ Ազատել են միայն 6 կին և 9 տղամարդ ու երեխաներ։ Սպանուածների թիւը հասնում է մինչև 200-ի։ Այս բոպէիս գիւղը դատարկ է։ Հայերից նահատակւել է՝ Քեարխանի կռւում՝ Բազաբուրջ գիւղացի Խաչատուր Առաքելեան։

Օգոստոս 4-ին, հայերը յարձակւում են ու հիմնայատակ անում Ինջավարը՝ (30 տուն. այդտեղ սպանում է Կուսակում գիւղացի Զիլֆիդար Աբելեանցը), ինչպէս և երկու Զուլլու գիւղակները (5-ական տուն), Եմազլու՝ (40 տուն) և Դաշնավ՝ (10 տուն)։ Այդ դեպքերից յետոյ թուրքերը կամենալով շաղուեցնել հայերին, յարձակւում են օգոստոսի 6-ին՝ Ղարաբաբա հայ գիւղի վրայ, որ գտնւում է Ղափան-Բարգուշատի հովտի արևելեան կողմում։

Այդ օրերը, օգոստոսի 6-ին, Իսկանդարբէգլուս և Խօջահանի հասարակութիւններից ու Զիբրայիլի գաւառի Խանլրը, Շօթալանլու և Մօփրուզլու հասարակութիւններից եկած թուրքերը, ղեկավարութեամբ Ալադին գիւղ.ի Բեգլար Միրզա Հասան օղլու, իսկանդարբէգլուցի Ադիլ բեգի, Բէհբուդ բեգի, Աստանբէգ Սուլթանօվների և Ֆարաջբէգլուցի Բալաջա բեգի և Խմսիլ բեգ Սուլթանօվների՝ յարձակւեցին առաւօտեան ժամը 6-ին Ղարաբաբի վրայ։

Դեպքը այսպէս է լինում։ Ղարաբաբից երեք հոգի, իրանց ջորիները ցորենով բեռնած, գնում են եղել Հագարակ գիւղը։ Եմազլու թուրք գիւղի ջրաղացի մօտ՝ Խմսիլ Բեգ Սուլթանօվը մի քանի թուրքերի հետ կտրում են դրանց առաջը և խլում գրատները՝ բեռներով։ Հայերից մէկը, Վահան Բեգ Մկրտիչ-Բեգեանը իր բեռը չէ տալիս և վերադառնալով գիւղը յայտնում է, որ իր ընկերներին թալանեցին։ Այդ գիւղի Բեգերը, լուրն ստանալուն պէս՝ թուրքերի յետևից են ընկնում և Թիրբալար անուանուած տեղում բռնւում են հրացանաձգութեան՝ իրանց դէմ եկող ահաւոր խուժանի հետ։ Թուրքերին հետապնդողները լինում են Թադէոս Բեգ, Ջհանգիր Բեգ և Բալա Բեգ Մելիք-Քարամեանցները։ Հայերը չ'կարողանալով դիմադրել թուրքերի խմբերին, երեք հոգին յետ են նահանջում և դիրք բռնում. միևնոյն ժամանակ երեխաներին ու կանանց տեղափոխում են Հագարակ գիւղը. տեղափոխելու ժամանակ Լիմաղլու գիւղում սպանում են Բահրամ Բեգ Հայրապետ Բեգեանը, Անուշկա Ախաբեգեանը և օրիորդ Սաթինիկ Հաթամբեգեանը. վերջինը երկար դիմադրել է, և թուրքերը չ'կարողանալով կենդանի բռնել՝ հրացանազարկ են անում. Ալադինցի Բեգլար Միրզա Հասան օղլին գլուխը կտրում է և տանում։ Այդ ժամանակ գիւղը շրջապատւած է լինում հազարաւոր թուրքերով։ Կռւի ժամանակ սպանել են Միքայէլ Բեգ Մելիք-Քարամեանցը (հայի գնդակից) և դրա եղբայր Բեգլար Բեգ Մելիք-Քարամեանցը. վերջինիս գլուխը, ձեռները, ոտերը կտրել են և տարել։ Կռիւը տևել է մինչև երեկոյեան ժամի 8-ը։ Մութը ընկնելուն պէս՝ թուրքը կռւողները հեռանալիս՝ կանչում են մնացող թուրքերին՝ „եթէ դիրքերի մօտից մի հայ բաց թողելու լինեք, առաւօտեան ձեր վիզները կը կտրենք"։ Հայերը ամբողջ օրվայ անհաւասար դիմադրութիւնից յետոյ օգտվելով մթութիւնից՝ փախուստ են տալիս դեպի Հագարակ։ Յաջորդ օրը թուրքերը գալիս են թալանում ամբողջ գիւղը, կրակում և հիմնայատակ անում։ Այդ կռւում թուրքերից սպանել են մօտ 60 հոգի (թուրքերի ասելով) և վիրաւորել են մօտ 100 հոգի։ Հայերից վիրաւորւել էին միայն 6 հոգի։ Բոլորն էլ առողջացել են։ Գիւղացիները հաւատաց թէ ոչինչ չեն կարողացել ազատել։ Ղափան-Բարգուշատի հովտում յետ ընկած հայկական այդ գիւղակը բաղկացած է 35 տնից։ Այդ գիւղի աւերման նախապատճառը իրանք են եղել, ինչպէս խոստովանեցին բեգերը։ Հագարակեցիները մի քանի անգամ առաջարկել են դուրս գալ և տեղափոխվել Հագարակ, բայց մի քանիսը հաւատալով, որ թուրքերը հաշտութիւն են կնքել, մնում են։ Նիւթական վնասը հասնում է մօտ 195,000 ր.։ Այդ կռւի ժամանակ մեծ հերոսութիւն է ցոյց տուել Յարութիւն Բեգ Մելիք-Քարամեանցը. միայնակ ազատել է մինչև 30 երեխայ և 400 գլուխ տաւար։

Գիւղի պաշարւած մնացին Եպոյնի խումբը լինում է Հագարակում, սակայն խմբապետը սուրհանդակի նամակին ուշադրութիւն չէ դարձնում և օգնութեան չէ գնում։ Գիւղի բեգերից մէկը դառնութեամբ ասում էր. „մեր գիւղը զոհ գնաց ան'ձնական կրքի"։ Եթէ Եպոյնի խումբը հասներ, իհարկէ, գիւղը անվնաս կ'մնար։ Իսկ Հագարակեցիներն էլ չէին կարողանում առաջանալ, որովհետև Ղարաբաբա երթալու համար պէտք է Եմազլու թիւրք գիւղը փչացնէին, ուր թէ տեղացիք և թէ եկեր թուրքերը դիրքեր էին բռնել։ Դժւար գործ։ Ղարաբաբայի աւերումից և թուրք հօրդաների հեռանալուց յետոյ՝ քաջ Հագարակեցիները յարձակւում են վերին Եմազլու (80 տուն), ներքին Եմազլու (40 տուն), Սարալու (60 տուն), Խաշտափ (40 տուն) և Ղուդարա (28 տուն) գիւղերի վրա և հիմնայատակ անում։ Այդ կռւում նահատակւեց Հագարակեցի Յովհաննէս Աղախանեանցը։ Թուրքերից սպանվել են մօտ 130 հոգի, իսկ վիրաւորները աւելի շատ։

Օգոստոսի 6-ին, (Ղարաբաբայի վրա յարձակման օրը), Հարաւից, Երասխի ափերի մօտ գտնուող Բարթազ, Օրդակլու, Զանգիլան, Փիրչեվան և Մինջեվան հասարակութիւնները՝ Թեմուր Բեգ, Աբդուլ Սամադ Բեգ Ջաւանշիրների, Փարաջ Բեգ Մինջեվանսկու և Աբասկուլի Բեգ Սուլթանովի ղեկավարութեամբ՝ յարձակւում են Ներքին Հանդ, Սրաշէն և Շիկահող գիւղերի վրա։ Երկու օրվայ դիմադրութիւնից յետոյ՝ հազարաւոր թշնամին իր ոյժը կենտրոնացնում է Հանդի վրա, կրակում մարագները, տանում 60 գլուխ տաւար ու զօրեղ կրակ տեղում ամբողջ 11 ժամ։ Օգոստոսի 7-ին, լոյսը բացւելուն պէս, կրիտիկական ամենածանր բոպէներում հասնում է Դաշնակցութեան համոտ և քաջ Կորիւնը իր խմբով և մի յանդուգն յարձակումով քշում է հազարաւոր ամբոխը, փրկում Հանդը։ Թուրքերը փախուստ տալուց թողել էին 6 դիակ. շատ

դիակներ փախցրել են։ Կռւի ժամանակ նահատակւել է Հանդեցի Մելքումը, վիրաւորւել են մի կին և մի տղամարդ։ Երկուսն էլ առողջացել են։ Թշնամիներին քշելուց յետոյ՝ անվեհեր Կորիւնը իր խմբով յարձակւում է և հաւաքում Քօլլուղչլաղ (30 տուն), Սանալու (30 տուն), Մթնաձոր (12 տուն) և Գուման (20 տուն)։ Այդ գիւղերը պրւած են։ Առաջի երկու գիւղերի ժողովուրդը վաղօրօք փախած է եղել, իսկ վերջին երկու գիւղերում թուրքերը թողել էին 8 դիակ։ Մթնաձորում վիրաւորւել էր Հանդեցի Ներսէս թունիեանց։ Այդ չորս գիւղերի ցորենները հայերը վաճառեցին յօգուտ տեղական կազմի։

Բերում եմ իբրև դէպքի նմուշ թուրքերէն բնագրից թարգմանւած մի նամակի պատճէն։ Բնագիրը, ինչպէս իմացանք, պրիստաւ Շ.-Կ.-ի մօտ է և ռուսերէն թարգմանութիւնը ուղարկւած է՝ Զանգեզուրի գաւառապետի միջոցով, գեներալ-նահանգապետ Բաուերին։

Ահա նամակը։

„Սիրելի Իբրահիմ բեգ և Թուստամ բեգ“։

„Որովհետև հայերն յարձակւելով Գեօղակլու (հայերը այդ գիւղի վրայ երբեք չեն յարձակւել) և նրա մօտիկ փոքրիկ գիւղերի վրայ՝ քանդել են, դրա համար խնդրում ենք հաւաքեք ձեր ղշլաղներից և մեր ղշլաղներից զինւած մարդիկ, ձի ունեցողներն ձիով և չունեցողներն ոտով՝ և թուղթս ստանալուն պէս գաք։ Մենք բոլորս պիտի գնանք։ Զը թողնէք ոչ մի հոգի. սպասում ենք։ Սրա հետ յայտնում ենք, որ սուրհանդակ է ղրկւած մեզ մօտ և Աղալար բեգն իր մարդկանցով վառ գնացել է, բայց մենք սպասում ենք ձեր ժողովրդին։ Միատեղ պիտի գնանք, վերջ“։

Թէմուր Զաւանշիր, Աբդուլլամադ,
Փարաջ Մինջեվանսկի։

Օգոստոսի 8-ին, Սիսիանից անցնում է Տախ-ի վրայով հերոս Մուրադը, կայծակ Առաքելի հետ, և իր խմբով յարձակւում է՝ հիսիսից՝ Աղվանի և Տանձավեր թուրք բեգերի գիւղերի վրայ, Սուլթանօվների աւազակաբունը և բոլորովին հիմնայատակ է անում՝ սպանելով 5 հոգու, որից մէկը տաժանակիր աշխատանքից փախած՝ յայտնի աւազակապետ Ա.բդուլլայի բեգ Սուլթանօվն էր։

(Կը շարունակւի)

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ

Ընկերներ,

Հայ ժողովուրդն այլևս չկարողացաւ դարերի ընթացքում իրան հալ ու մաշ անող, տուն ու տեղ քանդող, նիւթապէս ու բարոյապէս սարկացնող հարստահարիչների ու բռնակալների դժոխային լուծը կրել. այլևս չկարողացաւ անխօս ոչխարի նման իւր կռացած վիզը երկարացնել դահճի անողոք սրին, որն ինչքան կտրում, այնքան ոգևորւում էր, աւելի սատակացնում յծի ծանրութիւնը և գազանի ճիրաններն աւելի խորը ցցում հայի արիւնալից սրտի մէջ։

Հայն սթափւեց իւր դարաւոր քնից և, իբրև վիրաւոր առիւծ, ծառացաւ իւր արնախում թշնամու առաջ և աղաչանքի ու պաղատանքի փոխարէն, թղթի ու արտասուքի տեղ, կենքի դիմեց՝ իւր կեանքն ու գոյքը, իւր պատիւն ու արքութիւնը պաշտպանելու համար։

Յեղափոխութեան կարմիր աստուածը, որ միակ փրկիչն է հարստահարող և տառապող ժողովուրդների, նա, որ միակ նեցուկն է տանջւողի ու կրծանիչը՝ բռնակալութեան, յառաջն անցաւ լքւած ու հարստահարւած հայի և առաջնորդեց նրան։

Հայ յեղափոխութիւնը այդ շրջանում ցոյց տւեց գերմարդկային հերոսութիւն, ինչպէս նրա ծնող ժողովուրդը դարերի ընթացքում ցոյց է տւել՝ սարկութեան մէջ անսահման համբերութիւն. նա այդ կաքճատև ժամանակամիջոցում առաջացրեց այնպիսի խաղոր ու փառահեղ դէպքեր, որ հիացման ծափ դուրս խլեց ամբողջ աշխարհից, ոգևորեց իւր սորուկ զաւակներին և սարսեցրեց բռնակալներին։ Նա արեան կարմիր ծով դարձրեց իւր սիրած հայրենիքը, նրա զոհի-սեղանի վրայ բարձրացրեց իւր ամենամթ անկապին սիրելիներին, երկրի մէկ ծայրից միւսը վառօդի խունկ ծխեց Յեղափոխութեան Աստծուն և լեռնից լեռ թնդացրեց «Ազատութիւն կամ Մահ» նշանաբանը։

Դժբախտաբար այդ հերոսական ճիգերը իրանց ցանկալի հետևանքին չհասան, չնորհիւ մի շարք ծանր հանգամանքների, որոնց մէջ աննշան դեր չխաղաց, ցաւ է ասել, կռւող այժերի անհամերաշխութիւնը։ Մարդիկ, որոնք պէտք է նոյն նպատակի համար համախմբւէին, մարդիկ, որոնք կոչւած էին դժբախտ ժողովրդի ցաւոտ վէրքերը դարմանելու՝ շատ անգամ՝ անհամերաշխութեան շնորհիւ ջլատում էին առանց այն էլ չափազանց փոքր այժերը և անգիտակցաբար զօրեղացնում թշնամուն ու ապարդիւն տալիս հակայեղափոխական մութ ու խաւար այժերին։

Ու տարիներ անցան այդ կերպ։

Տանջւող ժողովրդի անմիջական շահը, նրա փրկութեան արդար դատը այժմ անողոք կերպով հարկադրում է՝ մի կողմ թողնել անցեալ տխուր դէպքերը, ձեռք ձեռքի տալ, համախմբւիլ և միասին դուրս գալ թշնամու առաջ, խորտակել նրան և նրա փլատակների տակից դուրս կորզել սորուկ ժողովրդի իրաւունքն ու պատիւը, նրա արքութիւնն ու կեանքը։

Ձեզ, դէպի ձեզ է ուղղում տառապեալ ժողովուրդը իւր հայեացքը, ձեզ է երկարեցնում նա իւր ձեռքը արեան ծովի միջից. և դո՛ւք, հայ յեղափոխականներ, միահամուռ այժով դէպի նրան վազեցէ՛ք, լսեցէ՛ք նրա ցաւատանջ սրտից բղխած համերաշխութեան կոչը։ Այդ կոչը, որ անում է հայ ժողովուրդը իւր ազնիւ զաւակների, նրա ցաւերն իրանց ուսերի վրայ տարիներ շարունակ տանող հերոսների, և անհամերաշխութեան դառը պտուղները վայելող քաջերի բերանով, պիտի ստիպէ մեզ խնդարհիւլ, պիտի ստիպէ մեզ մոռանալ ամեն մի անձնական ու կուսակցական միտումներ և ոգևորւած մեր արդար դատի սպագայ յաղթանակի գաղափարով, ձեռք ձեռքի տալ, միասին կռւել՝ մեր տանջանքը թեթևացնելու, մեր ցաւերը դարմանելու։

Թո՛ղ այդ համերաշխութեան կոչը արձագանք տայ ամենուրեք ուր հայ սիրտ կայ՝ հայ ցաւի համար բարախող, և իւրաքանչիւրն աշխատի համերաշխութեան հիմքի առաջին քարը դնել։

Մենք գնում ենք այդ ճանապարհով...
Կեցցէ՛ հայ յեղափոխութիւնը
Կեցցէ՛ համերաշխութիւնը՝

Հ. Յ. Դաշնակցութեան
Արբպատականի Կ. Կոմիտէ.

1906. Դեկտ. 15 Հնչակեան Ս.-Դ. Կ.
Պարսկ. Մ-ղերի Գործ. Յանձնախումբ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ

ԱՐԵԱՆ ԷԶԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԱՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(ՎԵՐՋ)

Հալէպի նահանգի Մարաշ քաղաքին մէջ զգալի ըլլալով, որ միւսուլմանները չար նպատակով մը քրիստոնէից վրայ պիտի յարձակին, տեղւոյն հայ կաթոլիկ և բողոքական կրօնապետները և Իդարէի ժողովոյ անդամները տեղւոյն միւթէսարիֆին կը դիմեն և պաշտպա-

նութիւն կը խնդրեն։ Սակայն կարևորութիւն չի տրուիր, և հոկտեմբեր ամսոյ 13-ին, ուրբաթ օր, միւսուլմանները կը յարձակին քրիստոնէից վրայ և շատերը կը վիրաւորեն և անգորրութիւնն ու ապահովութիւնը կը խանգարուի բոլորովին։ Մինչդեռ քրիստոնեայ հասարակութեանց կրօնապետները պաշտօնապէս և գրաւորապէս կը դիմեն վերտին տեղւոյն միւթէսարիֆին և գօմանդանին, բայց դարձեալ կարևորութիւն չի տրուիր. յարձակումը կը շարունակուի և շատ մը քրիստոնեաներ կը վիրաւորուին և կը սպանուին։

Հալէպի Նահանգի Ուրֆա քաղաքին մէջ, հոկտեմբերի 16-ին, սպառազինեալ թիւրքեր և քիւրդեր խումբ խումբ կը խուժեն հայոց թաղերը, կը սկսին սպանութեանց և աւարառութեանց։ Հետևեալ օրը միանալով Համիդիէ վաշտերու զինուորաց հետ՝ անոնք կը յարձակին հայոց կրպակներու վրայ. գոյքերէ և ինչքերէ բան մը չը ձգելով՝ ամենն ալ աւարի կուտան, և վաճառական թէ արհեստաւոր՝ ամենքն ալ իրենց բոլոր ունեցածներին կորսնցուցած են։ Անձնապաշտպանութեան դիմող հայերը պահեստի զինուորներէն կարգելին, և մինչև իսկ այս զինուորաց արձակած գնդակներէն սպանուողներ կը գտնուին։ Անձի կորստեան ու նիւթական վնասին որքանութիւնը յայտնի չէ տակաւին։

Հալէպի Նահանգի մի այլ կողմը, Այնթապ գաղզայի քաղաքին մէջ, բէտիվ զինուոր մը ալաճա ըսուած գումաշ առնուլ կ'ուզէ հայ խանութպանէ մը առանց փոխարէնը վճարելու։ Խանութպանը չի համամաձայնիր և զինուորը ուժգնապէս կսկսի խանութպանը ծեծել։ Ասոր վրայ թիւրքերն ու Համիդիէ վաշտերու զինուորները հայոց կրպակներուն վրայ կը յարձակին և ամբողջապէս աւարի կուտան, վիրաւորելով և սպանելով հայերը։ Շուկայէն կը դառնան և կը յարձակին հայ հարուստ դասակարգի տուներու վրայ։ Այս դասակարգէն Նիզիպլեանի տունը չը կրնալով մտնել, խուժանը կրակի կուտայ տունը և մէջը գտնուող ընտանիքը և տղայքը հրոյ ճարակ կը լինին։ Տեղական կառավարութիւնը անկարող լինելով արգիլելու այս յարձակումը՝ հայոց տուներէն և կրպակներէն շատերը աւարի կը տրուին և կ'աւերին։ Թէ այս վնասուց և թէ անձերի կոտորածին որքանութիւնը տակաւին չէ հասկացուած։

Հալէպի Անթաքիա գաղզային և ասոր յարակից գիւղերուն մէջ թիւրքերը և ֆելլահները քրիստոնէից տուներուն, կրպակներուն և եկեղեցիներուն վրայ յարձակելով՝ զանազան տեսակ հարստահարութիւնք և չարագործութիւնք ի գործ կը դնեն։ Տեղական կառավարութիւնը ո՛չ միայն կարևորութիւն չէ տուեր քրիստոնէից դիմումին և խնդրուածքին, այլ և ասոնք ապստամբ և յեղուզակ ցոյց տալու գաղափար մը ունեցեր է և լուր տարածեր է, որպէս թէ այն կողմերը անգլիական զօրք ղրկուած է, որով գրգռում առաջ բերեր է միւսուլմանաց մտքերուն մէջ, և քրիստոնեայք ծանր վտանգի ենթարկուեր են։

Ատանայի Նահանգի Հաճըն գաղզայի գիւղօրէից միւսուլմանները՝ չէրքէզները և բաշիբօզուկները քրիստոնէաներէն շատերը վիրաւորած և սպանած և ամբողջ ինչքերէն և գոյքերէն յափշտակած են։ Հաճընի հայոց և բողոքականաց կրօնաւորք դիմելով գայմագամին, խնդրել են միջոցներ ձեռք առնել կոտորածը և աւարառութիւնը դադրեցնելու, սակայն գայմագամը կը պատասխանէ. „Չեզ կոտորել պիտի տամ, ինչպէս եղաւ ի Սասուն, և ձեր տուներուն տեղ գարի պիտի ցանել տամ"։ Այդ ասելով քրիստոնէից տուներու մէջ և ճանապարհորդներու ձեռքը գտնուած ո՛չ-արգիլեալ զէնքերը ժողովեր առեր է և հետևաբար մարդասպանները և աւարառուներն մի անգամ ևս քաջալերեր և սպանութիւն և յափշտակութիւն գործեր են, որով քրիստոնեայք ըստ ամենայնի թշուառութեան ենթակայ եղեր են։

Ատանայի Փայաս գաղզայի Զօքմէրզիման, Նաճարլը, Օճակլը, Խոզէիրլը, Եուսուրթալը և Միսիս գիւղօրէից և ագարակաց մէջ թիւրքերը, քիւրդերը, չէրքէզները անսանձ կերպով հայերը կը վիրաւորեն, կը սպանեն. ամբողջ ինչքերնին, գոյքերնին, պարէններն, արմտիքնին և մեսաբսի խոզաներնին կը յափշտակեն, աւարի կուտան, գիւղերն ու ագարակները կայրեն։ Միայն Նաճառլը գիւղին ագարակաց թիւը 140-ի կը հասնի։ Չարագործք Նաճառլը գիւղին հայ կիներն ու աղջիկները իրենց մէջ բաժանելու և չ'ախորժուածները մեռցնելու մտօք տեղ մը կը հաւաքեն և արգելանաց ներքև կառնեն։ Համիտիէ գաղզայի գայմագամը իր հետը ունենալով տասը հատ հեծելազօր, աղէտին վայրը կուգայ և թշուառ հայոց թախանձագին աղերսանացը վրայ՝ կը յաջողի հայ կանանց և աղջկանց չարագործներու մէջ բաժնելու և սպանելու վտանգին առաջն առնել։

Ցիշեալ գիւղի Յակովբ քահանան հոկտեմբեր ամսոյ 28-ին, շաբաթ օրը, երբ եկեղեցւոյ մէջ աղօթից և եկեղեցական արարողութեանց զբաղած էր, բէտիվ զօրաց հազարապետ չէրքէզ Իսմայիլ աղային գրգռմամբ՝ բէտիվ զինուորները կը խուժեն եկեղեցին և բազում անկարգութեամբ ու չարիք գործելէ և սուրբ գրքերն ու նուիրական անօթները ջարդ ու փշուր անելէ վերջ՝ կը յարձակին քահանային սենեակը, ուր իրենց գաղանային կիրքը կը գոհացնեն երիցուհուն վրայ։ Իսկ Յակովբ քահանան իբրև եղեռնագործ՝ կուսակալութեան կեդրոնատեղին՝ ի Հալէպ կը տարուի և կը բանտարկուի։ Հալէպի կուսակալը առաջնորդարանին դիմումին և գանգատանացը վրայ՝ իր ներկայութեան բերել կուտայ Յակովբ քահանան և կտուգուի, որ անոր դէմ ասուածը զրպարտութիւն է։ Գազաններու ճիրաններուն մէջ ինկած հայեր իրենց կեանքն ու պատիւը փրկելու համար՝ շրջակայ գիւղերէ Զօքմէրզիման ապաստանած են, բայց այնպէս կը հուչակեն, որպէս թէ ասոնք ապստամբած և այնտեղ հաւաքուած են. Թիւրքերու, քիւրդերու և չէրքէզներու կողմէ այս թշուառներուն կենաց, պատուոյ, ընչից վրայ ի գործ դրուած չարագործութիւնները նկարագրել անկարելի կը լինի։ Բաց աստի, այն կողմերը ղրկուած զինուորներուն և գիւղացիի հագուստով ծպտեալ ժանդարմներուն արարքն ու ընթացքը ցաւալի տեսարան մը կը ներկայացնէ։ Բազում կիներ թիւրք լեռնականներու և չէրքէզներու հարստահարիչ ձեռքն անցած են, շատ տեղեր ալ հայ աղջիկներ բռնութեամբ իսլամացուցած են և իրենց ծնողացը չեն յանձնած։

Ատանայի Նահանգի Գօզան սանճակի Սիս քաղաքի

և շրջակայ գիւղօրէից մէջ՝ միւսուլմանները հայեր վիրաւորած, սպանած ու ընչից ու գոյից աւարառութիւն ի գործ դրած են. այս պատճառաւ անդորրութիւնն ու ապահովութիւնը խանգարած և ամբողջ ժողովուրդ ահ ու սարսափի մատնուած՝ փակեր է տուներու մէջ։

Էնկիւրիի նահանգի Գայսերիէ քաղաքին մէջ միւսուլմանները, նոյեմբեր ամսոյ 18-ին և 20-ին, խուժելով հայոց վրայ՝ շատերը կը սպանեն և շուկան ամբողջովին աւարի կուտան. տուներ կը կողոպտեն և կայրեն, կանանց և աղջկանց պատիւը կը բռնաբարեն։ Չարագործները այսքանով չեն բաւականանար. կանանց բաղնիքին վրայ ալ կը յարձակին և անբարոյական վարմամբ կը կողոպտեն կանանց ունեցածը։ Գայսերիէ քաղաքին մէկ քանի գիւղերու մէջ ևս ընչից, ոչխարաց և այլ անասնոց յափշտակութիւն և աւարի եղեռնագործութիւնք տեղի կունենան և գիւղացի ժողովուրդը անկարող՝ իր կենաց, պատուոյ և ընչից պաշտպանութիւնը ընելու՝ ահ ու սարսափի կը մատնուի։

Մամուրէթ-իւլ-Ազիզ նահանգի Խարբուդ քաղաքի Ուլովա և Գոզովա անուն տեղերու 53 հայաբնակ գիւղերու վրայ կը յարձակին թիւրքերը և ինչք, գոյք, ուտեստ, արմատք՝ ինչ որ կայ, ամբողջովին աւարի առնելէն վերջ՝ գիւղերը կայրեն, եկեղեցիները կը կործանեն, սրբազան անօթներու և նուիրական իրերը կը ջանջախեն, շատ մը քահանայ կը սպանեն, շատ մը քրիստոնեայ հայեր բռնութեամբ և սպառնալիքով իսլամ կ'ընեն։ Ողջ մնացող հայեր մերկ ու անպատսպար Խարբուդ քաղաքը կը դիմեն։ Մարդասպանք և աւարառուք Խարբուդ քաղաքն ալ կուգան ու յարձակելով հայոց թաղերուն վրայ, ս. Յակոբ անուն թաղը իր եկեղեցովը, վարժարանովը բոլորովին կ'աւերեն և շատ մը հայեր կը սպանեն։ Սպանելոց դիակները, կարելի չըլլալով անմիջապէս հաւաքել և թաղել, փողոցները կը մնան և կերակուր կը լինին գազանաց։ Քահանաները կոտտամահ կը լինին։ Քահանաներէն ոմանք՝ բռնութեան ներքև ածիկելով մօրուքնին՝ իսլամութիւն կ'ընդունեն։ Այս գիւղօրէից մէջ տուն, եկեղեցի, դպրոց և քահանայ մնացած չէ։

Խարբուդ քաղաքին յիշատակ հին դարերու չորս վանքերը, որք ցարդ կանգուն և շէն մնացած էին, յարձակումէ ազատ չեն մնար։ Խուժանը ասոնց ինչքերը, գոյքերը և նուիրական անօթները յափշտակելէ և կողոպտելէ վերջ՝ կայրէ և պատերը կը թողու։ Վանահայր Յովհաննէս վարդապետը և վանուց պահապանն ու ծառաները քստմնելի կերպով կտոր-կտոր ընելով՝ կը մեռցնեն։ Անձանց կորուստը, ընչից և գոյից, կալւածոց, գիւղօրէից, եկեղեցեաց, վանօրէից և վարժարանաց մնասը թուել և ճշտել անկարելի եղած է։

Մամուրէթ-իւլ-Ազիզ նահանգի Էկին գազայի գիւղօրէից մէջ ևս Ցէրսիմցիք յարձակումներ ընելով հայոց ամբողջ ինչքն և գոյքն աւարի տուած, ոչխարները և անասունները քշած տարած ու շատ անձեր վիրաւորած ու սպանած են. մնասը յոյժ մեծ է ու հազարաւոր մարդիկ բնակարանէ, ուտեստէ և հագուստէ զուրկ մնալով՝ թշուառութեան ենթարկուած են։ Էկին գազայի յարակից Լիճք, Կամարակապ, Կարուշլար, Ապուշեխ և ուրիշ գիւղերու հայ բնակչաց կեանքը, պատիւը և ինչքը վտանգի ենթարկուած են ու իսլամութիւն ընդունելու համար սպառնալիք տեղի ունեցած է։ Մամուրէթ-իւլ-Ազիզ նահանգի Զըմշկածագ, գազայի Միատուն, Օձ, Բազապօն, Ցէքէ, Պրասիք, Հազարի, Պիրախի և այլ գիւղօրէից մէջ ևս Ցէրսիմի քիւրդերու կողմէ ընչից ու անասնոց յափշտակութիւն, աւարառութիւն և մարդ վիրաւորելու և սպանելու ոճրագործութիւնք տեղի կունենան, և այդ պատճառաւ հայերը վերջին ծայր թշուառութեան կ'ենթարկուին և միշտ վտանգի ներքև կը գտնուին։

Ցէրսիմ սանճակի Զարսանճակ գազային Բէրթէք անուն գիւղի մի քանի թաղերու և Դիլի-Սիւքլա գիւղի վրայ յարձակելով, հոկտեմբերի 26-ին, Ցէրսիմի քիւրդերը աւարառութիւն և սպանութիւն կը գործեն։ Այս յիշեալ քիւրդերը ամբոխ կազմելով՝ Զարսանճակ գազայի գիւղերուն և քաղաքին վրայ կը խուժեն, անդէն հայերը սպառազինեալ այնքան քիւրդ յեղուզակաց դէմ իրենց կեանքն ու պատիւն պաշտպանելու անկարող կը գտնուին և մեծ վտանգի կենթարկուին։

Մամուրէթ-իւլ-Ազիզ նահանգի Ուրապկեր գազայի գիւղերը աւարի տալէ, մարդեր սպանելէ և գիւղացիները մերկ ու անօթի վիճակի մէջ ձգելէ վերջը՝ քիւրդ յեղուզակները հոկտեմբերի 25-ին, Ուրապկեր քաղաքը կը մտնեն և յարձակելով շուկային և թաղերուն վրայ՝ հայոց ամբողջ ինչքը և ստացուածքը, դրամը և ուտեստը աւարի կուտան և հանգիպած հայերը կը վիրաւորեն և կը մեռցնեն։

Քիւրդ յեղուզակները չը բաւականանալով այս վայրագութեամբ, հայերը բոլորովին ընաջինջ ընելու դիտումն ունեցած ըլլալու են, որ Ուրապկեր քաղաքը մէկ քանի տեղէն կրակի կուտան և հայոց տուներուն և կրպակներուն մեծագոյն մասը կ'այրեն, և այս կերպով հազարաւոր անձանց անօթի և անպատսպար մնալու, թշուառութեան մատնելու պատճառ կ'ըլլան։ Կարելի եղած չէ ճշտիւ գիտնալ անձերու կորստեան քանակութիւնը և ընչից ու գոյից, կալւածոց վնասուց որքանութիւնը։ Գիւղացի քրիստոնեաները իրենց բոլոր ունեցածը և իրենց ապրուստի միջոցն եղած ոչխար, անասուն և գործիք կորսնցուցած են. ասոնց մէջ ոմանք իրենց վտանգուած կեանքը ազատելու նպատակաւ՝ սպառնալեաց ներքև տեղի ունեցած հրաւէրի վրայ թողած են քրիստոնէական հաւատքը և ընդունած իսլամը։

Ուրապկերի մէջ Գրիգոր վարդապետը և Մկրտիչ, Գեղամ, Գարեգին և Ներսէս քահանաները սպանուած են և տեղւոյն առաջնորդական փոխանորդ Յուսիկ քահանան բանտարկուած է։

Այս ցաւալի դէպքերու նկատմամբ գաւառաց կողմէ գրուած և պատրիարքարան ուղարկուած նամակաց և հեռագրաց վերոգրեալ ամփոփումէն յայտնի է, որ հազարաւոր հայեր մարդասպաններու ճիրաններու զոհ գնացած են, հարստութիւններն կողոպտուած, տուներնին աւարի առնուած և շատերու տուներն, խանութները այրուած են. ազէտէն ազատուող քաղաքացի և գիւղացի ժողովուրդն ալ մերկ և սարսափահար կը գտնուի։ Եւ այս օրինակ կացութեան մը մէջ, շրջաբերական կոնդակ հրատարակել և հրաւիրել հայերը, որ ապստամբու-

թիւն և յեղուզակութիւն չընեն և հանդարտ կենան, կը նշանակէ համայն աշխարհի առջև վշտալից և յուսահատ ժողովուրդ մը իբր ապստամբ և յեղուզակ հռչակել, որ ըստ ամենայնի հակառակ է արդարութեան և խղճի, և որը պիտի վրդովէ անօրինակ ցաւերով և վշտերով դառնացած սրտերը։

Արդ, վեհափայլ նախարար, Անատօլուի կայսերական նահանգաց մէջ տեղի ունեցած և յատուկ ուղղութիւն մը առած քստմնելի դէպքերուն վերջ դրելուն և անդորրութիւնն ու ապահովութիւնն իրապէս և ճշմարտապէս հաստատելու համար՝ կը խնդրեմ, որ մարդասպաններն, աւարառուներն, հրձիգներն, առևանգողներն, բռնի կրօնափոխութեան հրաւիրողներն, կրօնական սրբութիւնը պղծողներն, կանանց և աղջկանց պատիւները բռնաբարողներն և այլն, որոնց նմանը չը տեսնուած արարքներն հասարակ ոճրագործութեան կարգէն չեն, ինչպէս նաև այն աղէտից հեղինակ ու պատճառ եղողներն, որոնք որ ալ լինին, ձերբակալելով, յետ դատաստանին արժանի պատիժներն կրեն։

Օսմանեան մեծազօր կայսրութեան մէջ հռչակեալ կրօնի ազատութիւնն չը բռնաբարելու համար՝ կը խնդրեմ, որ բռնի կրօնափոխութեան ենթարկուած կարգ մը գիւղերու հայ ժողովուրդներն և այլ անհատները ազատ թողուին իրենց քրիստոնէական կրօնն պաշտելու, ինչպէս և կողոպտեալ վանօրէից և եկեղեցեաց մատեաններն, անօթներն, խաչերն, այլև արծաթեղէն նիւթական սրբութիւններն վերադարձնուին, ինչպէս նաև տաճկաց գերեզմանատանը թաղուած վերոյիշեալ Մխիթար քահանային և միւս հայոց դիակները փոխադրուին հայոց գերեզմանատները։ Պատուոյ անաղարտ պահպանման անվթար մնալու համար, կը խնդրեմ, որ իբրև գերի առևանգուած աղջիկները և հարսները իրենց տուներնին ու խնամակալներուն յանձնուին։

Կը խնդրեմ նաև, որ ընչից վայելման իրաւունքը պաշտպանելու համար՝ աւարի առնուած և կողոպտուած խանութներու ապրանքները, գրամներն, տուներուն կահաւորները, արանց և կանանց զգեստները, կանացի արդուզարդերն, ոչխարներն, կենդանիներն և արհեստաւորներու ու երկրագործներու գործիքներն իրենց տէրերուն դարձուին, որպէսզի քաղաքացի և գիւղացի հայ ժողովուրդը, իր առևտուրովն, արհեստովն ու երկրագործութեամբ պարապելով՝ կարենայ ճարել իր ապրուստն և վճարել իր տուրքերն, ինչպէս արդէն զինուորական, կալուածական, կրթական և այլ կարգի տուրքեր վճարելով՝ օգտակար եղած է միշտ արքունի գանձուն և գերակշիռ հանդիսացած իր ծառայութեամբը, բաղդատմամբ իր բնակակից այլ ժողովրդոց ծառայութեանցը։

Արդարութեան, պաշտպանութեան և գործադրութեան համար՝ կը խնդրեմք արձակել անմեղ բանտարկեալներն, որոնց դառն կացութիւնը վշտաբեր տպաւորութիւն կ՚ընէ անոնց վրայ, որոնց կը վերաբերին այդ բանտարկեալք։

Աղէտէն ազատուած, սակայն անյարկ, անտուն մերկ և անպատսպար ու իր հարստութենէն, օրապահիկէն, իր տնական կահկարասիքէն, հագնելու հանդերձներէն և իր արհեստին վերաբերեալ գործիքներէն և այլն, զրկուած ժողովուրդն այս ձմրան եղանակին մէջ սովու կը մատնուի, հետևաբար և նոր ու սոսկալի աղէտ մը ազատելու համար, անմիջական օգնութեան կը կարօտի, ուստի յանուն գթութեան և մարդասիրութեան՝ կը խնդրեմ, որ կայսերական կառավարութիւնն հաճի երկրին համար այնչափ օգտակար եղած հայոց դժբախտ ժողովրդեան օգնել, յօգուտ և ի բարգաւաճումն երկրին։

Հանեցէ՛, վեհափայլ նախարար, ընդունել ակնածանացս հաւատիցն։

4 դեկտեմբեր, 1895 (Ստորագրութիւն)
Կ. ՊՈԼԻՍ

ԿԻՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐ



ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ
(Տես „Դրօշակ", 1906, մարտ).

ՆԱՀԱՏԱԿԻԱԾՆԵՐ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Ստատիստ՝ 1894 յունուար—յուլիսի կենսագրական ընդարձակներ

III

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿՕՏՕԵԱՆ—Բնիկ մշեցի. հարուստ ընտանիքի զաւակ, չորս եղբայրներից երրորդը. 21 տարեկան, նոր ամուսնացած, թեթևաքայլ. կրակոտ նայուածքով և յանդուգն բնաւորութեամբ։ Մանուկ հասակում յաճախում էր քաղաքի կեդրոնական վարժարանը. բայց երբ դպրոցը գոցուեցաւ և երկրորդ եղբայրն էլ մեռաւ, նա պարտաւորուած եղաւ կիսատ թողուլ և առևտրական ասպարէզ մտնել։ Համբարձումի (Համբօ) փոքր հասակում յայտնի էր իր անհանդարտ բնաւորութեամբ, չէր պատահում որ մեծ եղբայրը տարեան մէջ մի քանի անգամ կառավարութեան տուգանք չը տար՝ սրա չարաճճիութեան պատճառով։ Մեծ հետաքրքրութեամբ էր հետևում այն բոլոր այցելութիւններին, խօսակցութիւններին, որ մի կարգ մարդիկ

գաղտնի կերպով ունենում էին մեծ եղբօր հետ, որը քաղաքում գործող յեղափոխական կարևոր անհատներից մինն էր. թէև իր երեխայութեան պատճառով՝ չէր վստահացուում քողը բաց անել նրա առաջ, այնուամենայնիւ նա առիթներ էր ստեղծում իր հետաքրքրութիւնը գոհացնելու համար։ Շատ անգամ, երբ իմանում էր որ այստեղ կամ այնտեղ յեղափոխականները համախմբում ունին, որպէսզի առիթ ունենար նրանց տեսնելու, նրանց հետ շփուելու, պատրուակելով թէ եղբօր կողմից է ուղարկուած, գնում էր նրանց մօտ՝ առանց թոյլտուութիւն ուզելու։

Տակաւին փոքր հասակի մէջ՝ Համբարձում տեսաւ, թէ ինչպէս կառավարութիւնը իր մեծ եղբօրը՝ Հաջուն, շղթայակապ աքսոր էր քշում։ Նրա մատաղ երևակայութեան մէջ բևեռուած մնաց այդ յուզիչ պատկերը, և օրէցօր իր մէջ աւելացրեց ատելութեան և վրէժի թոյնը։ Հաջին վերադարձաւ աքսորից։ Կառավարութիւնը շարունակում էր խորթ աչքով նայել նրա վրայ։ Մի օր, երբ իրենց ընտանեկան շրջանում, խօսք է լինում Հաջու կասկածելի և անապահով դրութեան մասին, Համբարձում ասում է եղբօրը. „Ի՞նչ ես սպասում։ Նորի՞ց պիտի երթաս բանտի մէջ կեանքդ մաշեցնելու. Անդրանիկը այնտեղ է—Սասունին ակնարկելով—նա պէտք ունի, գնա՛, նրան միացի՛ր“։ Հաջին այդպէս էլ անում է։ Շատ չի անցնում, չորրորդ եղբայրն էլ է բանտարկուում։ Տանը ինքը մնում է մենակ. բայց այս հանգամանքը արգելք չի լինում նրան՝ թէ տնային գործերը հոգալու և թէ միանգամայն կատարելու յեղափոխական պարտականութիւնները։ Առաքելոց վանքի պաշարման ժամանակ դրսի հետ յարաբերութիւն պահպանող սուրհանդակներից մինն էր։ Մշոյ „Դաղիկ“ խմբի տասնապետ էր նշանակուած։

Վերջապէս սկսւում է կռիւը։ Հրացանները սկսում են որոտալ Սասունում և արիւնը նորից ներկում է խրոխտ լեռները։ Մշոյ դաշտում հնչում է կամաւորների կոչը։ Համբօն էլ է հրացան վերցնում և պատրաստուում գնալու. բարեկամները շատ են աշխատում համոզել նրան, ետ կանգնեցնել իր նպատակից, բայց նա կտրուկ կերպով պատասխանում է իրեն արգելողներին. „Եթէ մեր տունը իմ հեռանալով մենակ է մնում՝ առանց օգնականի, այդ հոգս չէ, որովհետև այնտեղ լեռներում հարիւրաւոր ընտանիքներ կան՝ մենակ և օգնութեան կարօտ։ Եւ եթէ դուք ասում էք, թէ Սասունը պաշարել են Թիւրքերը և ներս մտնելը վտանգաւոր է, ես ասում եմ, որ նոյնիսկ հարիւրապատիկ սատանաներ պաշարած լինեն Սասուն, ես դարձեալ պիտի անցնեմ, այնտեղ հասնեմ։ Ես այդ երդուել եմ անել“։ Եւ բարեկամները, հակառակ իրենց խիստ հսկողութեան, մի օր զարմացած լսեցին որ Համբօն երկու ընկերների հետ գնացել է արդէն։

Դա գնացել էր։ Հարստահարուած ընտանիքների իրաւունքը, ճնշուած եղբայրների բողոքը անչափ վառել էին ճշմարիտ հայրենասէրի կտրիճ ոգին։ Մասնակցում է Սասնոյ կռիւներին, ներկայ էր նաև Քոփի կռուի ժամանակ և ամենից աւելի ոգևորուած խիզախողներից մէկն էր։ Երբ Թշնամին պարտուած ետ դառնալու վրայ էր, Համբօն դուրս է նետուում իր դիրքից և յարձակուում. Թունդ պայքարի ժամանակ՝ չէ իմանում թէ ինչպէս է վիրաւորուում. բայց վէրքերի պաղելուն ուշադիր դեռին է ընկնում։ Կռիւը վերջանում է. ընկերները մօտ են գալիս. նա բաց է անում աչքերը, ջուր է ուզում և հարցնում կռուի վախճանի մասին. երբ իմանում է, որ յաղթութիւնը տարուած է, մրմնջում է. „Է՛հ, ուրեմն ես հանգիստ կը մեռնեմ, իսկ դուք գնացէք և սիրած գործս շարունակեցէք“։ Ջուր են տալիս։ Համբօն գոցում է աչքերը և անշարժ ընկնում։ Ընկերները կարծելով որ հոգին ա-ւանդեց, համբուրում են անգին ընկերոջ և արիասիրտ նահատակի մարմինը ու հեռանում։ Երեք օր վերջ նոյն տեղից անցնում են սասունցիներ, գտնում են Համբօին մացառների եռա պահուրտած, բոլորովին գունաթափ, կմախքացած, բայց... տակաւին կենդանի։ Վերցնում են նրան ու հետերնին դաշտ տանում, ուր 15 օր ևս փախստական հիւանդի տառապալից կեանք վարելուց յետոյ, ստացած վէրքերից մեռնում է... Ընկերները արժանաւոր կերպով յարգած լինելու համար անմոռանալի ընկերոջ յիշատակը, փառաւոր հանդիսով նրա մարմինը թաղել են տալիս եկեղեցու մէջ։

ՔԷԼ ՕՀԱՆՆԷՍ ԶԻՒՐԱԹՑԻ.—45 տարեկան, միջահասակ, երկար բեխերով, խրոխտ նայուածքով։ Իր տոկունութեան և քաջութեան համար ընկերներից ստացաւ Քէլ մակդիրը։ 15 տարեկան հասակից սկսած՝ պանդխտութեան մէջ էր գրեթէ 30 տարի շարունակ։ Գլխաւորապէս եղել էր Իզմիրում։ Երբ ծանօթացաւ յեղափոխականների հետ և իրեն համար պարզուեց նրանց գործունէութեան նպատակը, հիմնովին յեղաշրջեց իր մտածելու և գործելու կերպը։ Այլ ևս նրա համար զզուելի դարձաւ պանդուխտի միօրինակ և անպատակ կեանքը. օտարութիւնը նրա համար կորցրեց իր բոլոր հրապոյրը, հայրենի երկրի յիշատակներն ու ցաւերը օրէցօր գրաւում էին նրա ամբողջ մտածմունքը և նա փշի վրայ էր զգում իրեն հեռու հայրենի հողից ու ջրից։ Հայրենիքում տիրած սարսափները փոխանակ վախեցնելու նրան, վրէժի հատուցման զգացումն էին վառում նրա սրտում։ Այդ զգացումը և հայրենի կարօտը վերջապէս նրան քաշեցին դէպի երկիր մի քանի ուրիշ ընկերների հետ։ Երկիր մտնելուց յետոյ՝ իրեն դրեց յեղափոխական մարմնի տրամադրութեան տակ, նրա որոշումով կատարեց մի տերրօր նոյնիսկ իր հօրեղբօր վրայ, որ մի կարգ մատնութիւններով իրենց գերդաստանի պատիւն էր արատաւորել։ Այդ տերրօրից յետոյ՝ Օհաննէս պաշտօնապէս ճանաչուեց զինուորական մարմնի անդամ և աչքի ընկնող մասնակցութիւն ունեցաւ Սասնոյ կռիւների մէջ.. Դահատակուեց Գէլիէ-Գուզանի կռուի ժամանակ։

ՓՈՔՐԻԿ ՊԵՏՐՈՍ (ՆԵՐՍԷՍԵԱՆ).—Մշոյ դաշտի Արագ գիւղից. 18 տարեկան, վառվռուն աչքերով, վայելչակազմ և աշխոյժ զինուոր։ Հազիւ գաղափար էր կազմել յեղափոխութեան վրայ, երբ ամենաբուռն փափագով որոշեց զինուոր դառնալ։ Այդ նպատակով մի քանի անգամներ դիմում արեց տեղական յեղափոխական մարմիններին, որոնք մերժեցին բաւականութիւն տալ նրա խնդիրքին՝ առարկելով թէ փոքր է և չի կարող տոկալ հայդուկային կեանքի պայմաններին։ Պետրոս փիրաւոր-

ւած է զգում իրեն, երբ ուղիղ իր երեսին անկարող են անուանում իրեն, բայց առանց մէկին յայտնելու իր վիրաւորանքը, լուռ անցնում գնում է։ Քիչ ժամանակ յետոյ նորից է յայտնում, հետը բերելով մի հրացան որ խլած էր մի քիւրդ բէգից։ Այս անգամ նա երկար չը խնդրեց,—բերած հրացանը արդէն բաւական մեծ փաստ էր իր քաջութեան։ Զինուորների շարքում ընդունուեց և սկսեց զինավարժութեամբ պարապիլ։ Իր գրաւիչ և ընկերասէր վարմունքով այնքան սիրելի դարձաւ ընկերներին, որ սրանք խմբի հրեշտակ էին կոչում նրան։ Սասունի կռիւներին մասնակցելուց յետոյ, Շամիրամի կռուի ժամանակ ևս՝ խմբի հետ էր գտնուում։

Շամիրամ գիւղում, արշալոյսին, պահապանը լուր է բերում, թէ թշնամիները ուզում են գիւղը պաշարել։ Բոլոր զինուորները նախորդ օրերի յոգնութիւնից՝ խոր քնով քնած են լինում։ Պետրոս պաշարուելու լուրը առնելուն պէս, երկու ընկերներով անմիջապէս դուրս է թռչում դէպի թշնամիները։ Ու մինչ միւս ընկերները արթնանում, պատրաստւում և խմբերի էին բաժանուում, նա արդէն դիրք բռնած կռուելիս է լինում թշնամու դէմ. բայց անողոք գնտակը ուրտեղից որ է ծակում է նրա գանգը ու անցնում։ Փոքրիկ ֆէդային իր անմեղմելի թափին մէջ՝ վար է գլորուում, նահատակ...

ՍԻՄՕՆ ՊՕՂՈՍԵԱՆ։—Սա Խնուսի Խալիլ-Չաւուշ գիւղից էր և ամենահարուստ ընտանիքի զաւակ։ 15 տարեկան էր տակաւին, երբ մասնակցում էր Համբարձում Պոյաճեանի գործունէութեան։ Բոլոր յեղափոխական անհատներին ու խմբերին, որոնք պէտք է Խնուսից անցնէին, նա էր ընդունում, պատսպարում ու ճամբայ գցում։ Մի անգամ մի քանի ընկերներով ընդհարում ունեցաւ Ջիքրանցի աւազակների հետ, որոնց յաղթեց և հալածեց։ Իր կուելու ընդունակութիւնների պատճառով՝ մեծ յարգանք էր վայելում քրդերից, որոնք նոյնիսկ իր անունը լսելիս դողում էին։ 1895 թուին ևս մի ընդհարում ունեցաւ Հաջի-Հայդար-Շէյխի հետ, որին և սպանեց։ Այնուհետև Սիմօնի համար դժուար եղաւ, թշնամիների պատճառով, իրենց գիւղը մնալ, ուստի պարտաւորուեցաւ ընտանիքով փոխադրուիլ Արսս գիւղը։ Ծանօթացաւ Հրայրի հետ և նրա զինուորներին միանալով, սկսեց այս կամ այն յանձնարարութեամբ շրջել Խնուսի գիւղերը. յաջողեց մի քանիսին շատ լաւ զինել, որոնք 1895 թուի կոտորածների ժամանակ մեծ ինքնապաշտպանութիւն ցոյց տուին քիւրդերի և թիւրքերի դէմ։ Այդ նոյն կոտորածների ժամանակ՝ Սիմօն մի զինուած խմբով փոփոխակի օգնութեան հասաւ Էլբիս, Քաղքիկ, Հարամիկ և ուրիշ գիւղերի, որոնց պաշտպանեց թէ կոտորուելուց և թէ թալանուելուց։ Կոտորածներից վերջ վերադառնում է տուն։ Գիւղի աղան, որ շատ լաւ էր ճանաչում Սիմօնի ամեն մի քայլափոխը, ձերբակալել տուեց նրան, իբրև Հաջի-Հայդարի սպանողին, և Կարին ուղարկեց, ուր երեք տարի մնաց բանտարկուած։

Ազատուելուց յետոյ նա դարձեալ գտաւ Հրայրին, դարձեալ շարունակեց նախկին գործունէութիւնը։ Տէրսրի է ենթարկում սեփական ձեռքով Թաթուլի մատնիչին, որ իր հօրեղբօր տղան էր, Տիգրան անունով։ Մատնիչի արիւնը թափելուց յետոյ, ընկերական պարտականութիւնը կատարած՝ քաշւում է Սասուն։ Այնտեղ մասնակցեց կռուի համար լինելիք նախապատրաստութիւններին և ապա երբ սկսուեց կռուի փոթորիկը, անվախ նետուեց նրա մէջ։ Պուլներից վերջ քեռու հետ վերադարձաւ դաշտ և նրա հետ էլ սպանուեցաւ պատմական գետնափորի մէջ։

(Կը շարունակի)

ԹԼՐԹՕՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Բ.

Մայրերկրի լեռները թախիծը կը պարուրէ ու հովիտները այրիացած են Երգերէ,
Ու Խոտերը դառնացած են Արիւնէն ու Գառնուկները կը մեռնին սովէն,
Իր Դաշտերը Թշնամին կը հնձէ ու Տէրերը սև հաց ու արմատ միայն կուտեն
Ու անոնց Ապրիլը սնգոյթ հեգնութիւն մ'է գերիի չարքաշ Կեանքին հանդէպ...
Իսկ մեր տուներուն մէջ, տուներէն դուրս ու տուներուն կից
Գերեզմանները, Գերեզմանները, Գերեզմանները...

Ու հոն կան շատ Մայրեր, որ կուրացած են Զաւակները ողբալէն,
Եւ հոն խմբեր Հարսներու՝ խեղթացած ամուսիններու Կարօտէն,
Հայրերը կան բիւրաւոր՝ հացի համար Թշնամիին Ոտքերը լուացող
Եւ աստղերու չափ Որբերը, որ Մոխիրներուն մէջ կը մեծանան...

Սակայն, Հայր, Բոլորն ալ Կամքիդ առաջ երկիւղածութեամբ կ'աղօթեն՝

Գիտակցելով, որ իրենց Արցունքը Անձրեւն է վաղուան Հայրենիքի Արտերուն,
Ու իրենց Կուրութիւնը՝ լուսաշող Առաւօտները ապառնի Օրերուն,
Իրենց Արիւնէն է որ պիտի անտառուին Կաղնիները քաղաքակրթութեան,
Ու իրենց Հալածանքի հողմերէն է որ պիտի հալին Սառոյցները բարբարոսութեան...

Ուստի կը քալեն Արիւնի գետեզերքներէն մահաբոյր՝ Յաղթանակ յուսալով։

Քեզ կը յուսան անապատները Տրտմութեան ու հողմերը Հառաչանքի,
Քեզ կը յուսան սահանքները Արիւնի ու տափաստանները Մոխիրներուն,

Քե՛զ կը յուսան հորիզոնները Թշուառութե՞ան ու սահմանները Տանջանքի՞ն,
Քե՛զ կը յուսան պատուհանները Սպասումի՞ն ու դուռները Այցի՞ն,
Քե՛զ կը յուսան երդիքները Սուգի՞ն ու սէմերը Հրաժեշտի՞ն,
Քե՛զ կը յուսան Օջախնե՞րը Թափո՛ւր ու Փարախնե՞րը անհո՛տ,
Քե՛զ կը յուսան առաւօտները Տառապանքի՞ն ու իրիկունները Տարակուսանքի՞ն,
Քե՛զ կը յուսան ցորեկները Ոճիրի՞ն ու գիշերները Արհաւիրքի՞ն,
Քե՛զ կը յուսան Ճամբանե՞րը ամայի ու Դաշտե՞րը անմշա՛կ,
Քե՛զ կը յուսան երգերը Բանտերո՞ւն ու աղաղակները Կախաղաններո՞ւն,
Քե՛զ կը յուսան նայուածքները Տնանկներո՞ւն ու աղօթքները Որբերո՞ւն,
Ու Քե՛զ կը յուսայ Մայր-Հո՞ղը զաւկըներուդ հպա՛րտ Գերեզմաններով...
Չի Քեզի հե՛տ են շեփորները Արդարութե՞ան ու պատգամները Խաղաղութե՞ան,
Քեզի հե՛տ են ըմբիշները Փառքի՞ ու հսկաները Անձնուրացումի՞,
Քեզի հե՛տ են բիւրերը Իրաւամարտներո՞ւն ու հարիւրակները Ահաբեկիչներո՞ւն,
Քեզի հե՛տ են վարդերը Կոկո՞ն ու շուշանները Հրաշափա՞ռ,
Քեզի հե՛տ են օրհնութիւնը Մայրերո՞ւն ու խրախոյսը Կոյսերո՞ւն,
Քեզի հե՛տ են արհաւիրքը Ուժի՞ն ու զարհուրանքը Մաքառումի՞ն,
Քեզի հե՛տ են ճամբաները Հերոսացումի՞ն ու վայրկեաններին Անմահացումի՞ն,
Քեզի հե՛տ են ծիածանները Հաշտութե՞ան ու տաղաւարները Սիրո՞յ,
Քեզի հե՛տ են ճիգերը Գերմարդկայի՞ն ու ծրագիրները Սարսափի՞ն,
Քեզի հե՛տ են տարափները Գնդակի՞ն ու հրդեհները Ռումբի՞ն,
Քեզի հե՛տ են աստղերը Փամփուշտի՞ն ու անտառները Հրացանի՞ն,
Քեզի հե՛տ են խռովքը Ովկեանի՞ն ու ահահոնգիստը Գերեզմանի՞ն,
Քեզի հե՛տ են խարոյկները Սուգի՞ն, ու հրաբուխները Վրէժի՞ն,
Ու քեզի հե՛տ են բոլո՛ր այն Հայե՞րը, որ գիտեն մեռնիլ...

Իսկ Ջոկատներո՞ւդ առջևէն կը քալեն Ստուերնե՞րը ինկած Մեծ Զաւակներո՞ւդ՝
Պայծառացեալ Ուսերուն վրայ կրելով Տապանակդ փրկութեան...
Հո՛ն են ու մի՛շտ անոնց հե՛տ Վիտոշի Բազէնե՞րն անմահ,
Անընկճելի Սերոբ-փաշա՞ն հայրական, Հրա՛յրը պաշտելի ու Վահա՞նը քաղցր,
Քեռի՞ն ահարկու, Արաբո՞ն արիւնկզակ ու Կարո՞ն անձնուրաց,
Պետոնե՞րը ցուլական, Ապրո՞ն աւարառու և Արտեմա՞նը կամազօր,
Բաքէ՞նն առիւծասիրտ, Գնունի՞ն հպարտ ու Արտաշէսնե՞րն արի,
Խա՞նը քաջամարտ, Նեվրո՞զն առնական ու Վաղարշա՞կն անվեհեր,
Վազգէ՞նն անվհատ, Նշա՞նը վսեմ, Գրգո՞ն իր Հարսո՞վ,
Կորկո՞տն արծուասիրտ, Քահանա՞ն հուժկու, Գարեգի՞նը վրիժառու,
Առիւծ-Սերո՞բն իր Կորիւններո՞վ, Կարասէֆերեա՞նցը վրիժախնձ ու Միքո՞ն անգդ,
Գոլոշեա՞նն անվախ, Ազրիպասեա՞նը վեհանձն, Գուրգէ՞նը կրակոտ,
Ցակո՞բը ճարտար, Սիմո՞նն անձնուէր, Նշա՞նն ահաբեկիչ ու Նատո՞ն կտրիճ,
Մալոեա՞նը մահատեաց, Եգիպտացի՞ն ժիր, Երկա՞թը անսանձ,
Կրետացի՞ն արթուն, Սեմալի Կրպո՞ն կուռ, Աստո՞ւրը մահախոյզ,
Որսորդ Գէո՞ղը նշանառու, Թորգո՞մը սրտոտ, Ախպէ՞րն աներկիւղ,
Վարդենիսցի Մուրա՞տը ռազմիկ, Թէրփէթող Սարգի՞սն արիւնախում և Մշեցի Եղո՞ն զահավէժ,
Ուռուղցի Ցարութի՞ն անձնազոհ, Կէլիկկիւզանցի Զաթո՞ն ժայռեղէն, Մշեցի Տիգրա՞ն անխոնջ,
Մուշե՞ղը ահրի, Մրա՞ն յառաջապահ և Ստեփանեա՞նը քաջ,
Բաղշէ՞ն արիւնարբու, Խորէ՞նն ըմբիշ, Արա՞մն ու Արտե՞մ,
Շերո՞ն ու Ռաշո՞ն, Մուքո՞ն ու Պողո՞ն, Մխո՞ն ու Գալո՞ն

. . . . . .

Ըսի թէ՝ Դրօշակներո՞ւդ տակ Մա՞հը քաղցրութիւնն ունի Ծնունդի՞...
Եւ ահա այդ Մա՞հը եղաւ Արգա՞նդը Քու հսկայական Զաւակներո՞ւդ անհամար,
Որոնք Մաքառումներէ՞ն, Ընդհարումներէ՞ն ու Ցաղթանակներէ՞ն այսօր աւելի հզօրացա՛ծ,
Պահակ են կեցած Գահի՞դ շուրջը և Հրամաններո՞ւդ կը ծարաւին...

ՎՏԱՐԱՆԴԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Բոլգարիայում տեղի ունեցած հակա-յունական ցոյցերը, անհամակրելի և աններելի, շարունակում են փրփրել յոյն երիտասարդութեան այլ և այլ խմբերը։ Դա „կրակի վրայ իւղ ածելու“ մի նոր աւիթ է, քանի որ „Մակեդոնական Հարցը“, առանց այդ էլ մեն-մենակ սրում, լարում էր երկու կողմերի յարաբերութիւնները, ստեղծելով մի ծանր վիճակ, կատարելապէս աննպաստ՝ հաժերաշխ ձեռնարկների համար։

Պարիզում հրատարակուող „Հելլենիզմ“ երկշաբաթաթերթը, օրգան յունական մի որոշ խմբակցութեան, անզուսպ ժղումն է տալիս հակա-բոլգարական քաղաքականութեան և զգացումներին, և իր ոգևորութեան մէջ կատարելապէս մոռանում է, որ Մակեդոնիայի, ինչպէս և յոյն-բոլգարական շահերը թագնուած են ոչ թէ երկու ազգերի փոխադարձ ատելութեան և մրցման, այլ նրանց ներդաշնակ, համերաշխ և բարեկամական գործակցութեան մէջ։ Մենք շատ անգամ առիթ ենք ունեցել հարուածելու այն տգեղ, վայրենի ցոյցերը, որոնք տեղի ունեցան բոլգարական իշխանութեան սահմաններում, ուղղած յոյն ազգաբնակութեան դէմ, ինչպէս և այն փոխադարձ ատելութեան փաստերը, որոնք տեղի են ունեցել և ունենում են Մակեդոնիայի սահմաններում, փաստեր, որոնք դարբնել

են յոյն ու բոլգար պոլիտիկոսների ձեռքով, հեռու յեղափոխական շրջանների տրամադրութիւններից։ Սակայն այդ տեսակ փաստերը չը պիտի կարողանան մեզ մոռացնել տալ՝ որ դրանք անցողական երևոյթներ են, որոնք երբէք և ոչ մի դէպքում չը պէտք է նսեմացնեն համերաշխութեան հիմնական գաղափարը, միակ պատուանդանը, որի վրայ պէտք է հիմնուի հակա-սուլթանական կռիւը թէ Բալկանում և թէ փոքր-Ասիայի մէջ։

Տարաբախտաբար, այդպէս չեն մտածում յոյն մտաւորականութեան բոլոր շրջանները, և երիտասարդական շատ շրջաններ իրենց քաղաքական դաւանանքն են դարձրել ազգայնական ատելութիւնը, որը ոչ թէ միայն հակակրելի է, այլ և անմիտ ու անգործնական Բալկանեան ժողովուրդների այժմեան պայմաններում։

Միակ մխիթարութիւնը այդ տխուր իրողութեան հանդէպ՝ այն է, որ դասական սքանչելի երկրի նորագոյն սերունդի մէջ փոքր առ փոքր, բայց լուրջ հաւատով, երևան են գալիս գաղափարական նոր շրջաններ, որոնք վճռել են անպատճառ հաշտութեան և համերաշխութեան կամուրջ հաստատել Երեկեան անհաշտ թշնամի և քինապահ կողմերի մէջ, յանուն այն քաղաքական ծրագրի, որի նպատակն է՝ խլել սուլթանների ձեռքից Կ. Պոլիսը և յանձնել նրան նորագոյն քաղաքակրթութեան։ Մենք ողջունում՝ ենք այդ նոր ծիլերը։

ԹԻՒՐՔ ԿՕՄԻՏԷԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Սուլթանի վերջին կարգադրութիւնների առիթով՝ „Միութեան և պրօգրէսի Օսմանեան կոմիտէն“ հրատարակել է թիւրքերէն մի շրջաբերական, հետևեալ բովանդակութեամբ.

„Հակառակ այն հաւաստիքներու, որոնք Ն.Բ.ԼԴԶԳ պալատին կողմէ կը տրուին, Ա.Բդիւլ-Համիդը կը տառապի „Մահուան հիւանդութեամբ“։ Շէրիի օրինագիրքերը „Մահուան հիւանդութիւնը“ այսպէս կը սահմանեն։ „Հիւանդութիւն մը, որ մահուան կը յանգի. այնպիսի ախտ մը, որ անդադար շարունակելով՝ ամբողջ տարի մը չը լրացած իր ենթական կը սպաննէ“։ Ահա այսպիսի հիւանդութենէն բռնուողներն՝ ըստ շէրիի և քաղաքային օրէնքներու՝ զրկուած են իրենց սեփական կալուածքներու և շարժական ստացուածքի մէկ երրորդէն աւելին ուրիշին փոխանցելու, նուիրելու և կտակելու իրաւունքէն։ Եթէ օրէնքի այս տրամադրութիւնը չը գործադրի Ա.Բդիւլ Համիդի նկատմամբ, որ կը գտնուի „Մահուան հիւանդութեան“ պարագայի մէջ, այս ապօրէն օրինակը պէտք է տարածուի մէկ կամ երկու ժառանգորդներէն՝ միլիոնաւոր ժողովուրդի վրայ, մէկ երկու տուներէն՝ ամբողջ կայսրութեան վրայ։

„Ինչ որ ալ լինի իսկական պատճառը, ամբողջ աշխարհին ծանօթ է, որ Օսմանեան կայսրութիւնը սուլթան Համիդի անձէն կախում ունի։ Մի՞թէ կարելի է, որ հիւանդ մը, որ իր սեփական աննշան ստացուածքն անգամ ուրիշին փոխանցելու կամ կտակելու իրաւունքէն զրկուած է, ընդարձակ կայսրութեան գոյութեան աղբիւրներէն մէկ մասը իբր նէր մէկու մը բաշխելու կամ իբր մենաշնորհ այս կամ այն անհատին ընծայելու իրաւունքն ունենայ։ Անշուշտ ո՛չ։ Շէրիթեն և օրէնքը բացարձակապէս կը հակառակին այսպիսի իրաւունքի մը։ Եւ այսպիսի աւերիչ մենաշնորհ մը, այսքա՜ն ամօթալի տիրապետական իրաւունք մը, չը կրնար պատկանիլ ոչ միայն հիւանդի մը, այլ աշխարհի ամենակարող վեհապետի մը անգամ։

„Ուստի սա ստոյգ է որ մօտաւոր ապագայի մը մէջ, մեր ազատագրութեան ժամուն, մեզի կը վերապահենք այս վերջին երկու ամիսներու ընթացքի մէջ տրուած բոլոր մենաշնորհները օրինաւոր չը ճանչնալու բացարձակ իրաւունքը։ Օսմանեան ժողովուրդը պիտի գիտնայ յարգել տալ, որոշ ժամանակին, այս իրաւունքը, որ կը տրուի իրեն Շէրիի և քաղաքային կրկնակի օրէնքներով։ Ուստի ապագայի մէջ որևէ առարկութեան կամ վէճի տեղի չը տալու համար, այժմէն իսկ կը յայտարարենք, որ Օսմանեան ազգը Աբդիւլ Համիդի՝ „Մահուան հիւանդութեան“ ընթացքի մէջ տուած արտօնութիւններն ու մենաշնորհները չը պիտի ընդունի“։

Անկասկած։

Օսմանեան կայսրութեան թագակիր Ա.ազգակապետը, որ 30 տարուց ի վեր գողացել և նուիրել է ինչպէս իր քիմքն է ցանկացել,—արժանի է այդ սաստին, լինի դա Շէրիթեի համաձայն, թէ բղխած պետական պարզ նկատումներից։ Սակայն ո՞վ պիտի իրագործէ այդ սպառնալիքը, այդ սքանչելի նախագգուշացումը։ Օսմանեան ժողովո՞ւրդը։—Նա անպատրաստ է։ Օսմանեան յեղափոխութի՞ւնը։—Նա անկազմ է։ Երիտասարդ-Թիւրքիա՞ն։—Նա գոյութիւն չ՚ունի։ „Միութեան և պրօգրէսի կոմիտէ՞ն“....

Ժամանակ է, որ Օսմանեան քաղաքական բոլոր կոմիտէները, շափաւոր թէ ծայրայեղ. վայր դնեն թղթի—սպառնալիքի սիստեմը, զգան, որ այդօրինակ սաստերը ոչ միայն Համիդին, այլ Ստամբուլի ոստիկանապետներին անգամ սարսափ չեն ազդում, կազմակերպուեն, կանգնեն մարտական հողի վրայ, յեղափոխական դրօշակի տակ, և լսելի դարձնեն իրենց ոտնակոխ ժողովրդի կամքն ու աղերսը...

Այդ ժամանակը վաղուց է եկել—բայց մեր Թիւրք դրացիները չեն տեսնում, չեն գիտակցում...

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Յունուարի 20-ին Ժընեվում կազմակերպուեց հրապարակական ցոյց՝ նուիրուած Պետերբուրգի յունուար 9 | 22-ի դէպքերի տարեդարձին։ Ցոյցի նախաձեռնողներն էին Ժընեվի Սոցիալիստական ընկերութիւնը և Սենդիկային խմբերը, ռուս Սոցիալիստ-յեղափոխականները, Սոցիալ-դեմոկրատները, Հ. Յ. Դաշնակցութիւնը, ֆրանսիական, իտալական և գերմանական սոցիալիստական կազմակերպութիւնները։ Հանդիսաւոր գնացքից յետոյ՝ տեղի ունեցան ճառախօսութիւններ։ Բացի այլ և այլ կուսակցութիւնների ներկայացուցիչներից՝ խօսք առան Մարսել Զէմբա, պատգամաւոր ֆրանսիական պարլամենտի, Էդգար Միլհօ, պրոֆէսոր Ժընեվի համալսարանի, և Սիգ, սոցիալիստ ժողովը ընդունած բանաձևով յայտնեց՝ „Ջերմ համակրանք Ռուսաստանի քաջարի ժողովուրդներին, որոնք կռւում են իրենց քաղաքական և տնտեսական ազատութեան համար“։

Հռոմի մէջ սկսած է հրատարակումը մի նոր օրգանի, „L'Italia all'Estero" անունով, նուիրուած արտաքին քաղաքականութեան հարցերին։ Հայկական դատը այնտեղ պիտի գրաւէ կարևոր տեղ՝ ղեկավարութեամբ մեր մի քանի իտալացի բարեկամների։

—

Կովկասեան կառավարութեան հալածանքը դաշնակցական լրագրների դէմ յարաճուն է,—տասն ամսուայ ընթացքում խափանեցին չորս օրգաններ՝ „Ցառաջ", „Ալիք", „Զանգ" և "Երկիր", մի փաստ, որ ի հարկէ, երկար կեանք չէ խոստանում Նրանց այժմեան յաջորդ „Ժամանակին։"

—

Մեր Ֆրանսիայի բարեկամները, լաւատեղեակ Ֆրանսիական կառավարութեան տրամադրութիւններին, վստահօրէն հաստատում են, որ ռուսական նոր փոխառութիւնը Ֆրանսիայում չի թոյլատրուի։ Կլեմանսօի մինիստրութիւնը յայտնել է Ցարի շրջապատին, որ նոր փոխառութիւնը կարող է կնքուել միմիայն Դումայի միջոցով։

ԿԱՋՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՑ

ՀԱՇԻԵԿՇԻՌ

Դեկտեմբերի վերջին ուղարկեցինք Դաշնակցական մարմիններին Արևմտեան Բիւրո—„Դրօշակի" խմբագրութեան տպած հաշուեկշիռը՝ 1904, 1905 թուերի և 1906 թուի առաջին կիսամեակի։ 1904—1906 թ. Ընդհանուր հաշուեկշիռը, որ արդէն տպագրած է, կ'ուղարկուի մարմիններին՝ Ընդհանուր ժողովի քննութիւնից և վաւերացումից յետոյ։

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

—

ԱԶԳ

Թէև ժամանակին Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնական օրգան «Դրօշակի» միջոցով (հոկտեմբեր և նոյեմբեր, 1906) հրաւէր էր ուղղած դաշնակցական բոլոր խմբերին ու անհատներին՝ հասցնել Ընդհանուր ժողովին իրենց կարծիքները, այնուամենայնիւ մի քանի խմբեր, մասնաւորապէս «Կովկասեան Նախագծի» դէմ դժգոհութիւն յայտնողները, դեռ ևս հարց են տալիս, թէ կարո՞ղ են արդեօք իրենք ևս օգտուել այդ իրաւունքից։

Այս առթիւ հարկ ենք համարում շեշտել, որ հրաւէրը վերաբերում է անխտիր բոլոր դաշնակցական խմբերին, ուրեմն և նրանց, որոնք բողոքելով հանդերձ՝ «Կովկասեան Նախագծի» դէմ, դուրս չեն գալիս կազմակերպութեան մէջ ընդունուած կանոնների սահմանից։ Եւ նրանք, որոնք ծեռնպահ են մնացել մինչև հիմայ և փափագ ունեն լսելի անելու իրենց համոզումները, թող շտապեն օր առաջ ծանակերպել իրենց ասելիքները և հասցնել Ընդհանուր ժողովին՝ պատշաճ մարմինների կամ ընտրուած պատգամաւորների միջոցով։

Հ. Յ. Դ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Կովկաս

ՆՈՒՐԱՏՈՒՄՈՒՆ

Ատրպատականի Կեդ. Կոմիտէն՝

ԴԵՏԱՓԻՆ № 1 հանգանակութեան թերթով՝ Ս. Ա. վ. 100 դրամ Բ. Վ. 100, Մ. Յ. Խ. Դ. 500, Ն. Պ. 150. Յ. Պ. 50, Կ. Ա. 150, Խ. Յ. 100, Մ. Ս. Ե. 100, Ա. Ա. 50՝ Ռ. Ա. 50, Ս. Պ. 50, Յ, 50, Տ. Թ. Ա. 30, Մ. Ղ. 20. Ե. Ա. 150, Կ. Դ. 50, Մ. Տ. Ա. 20, Վ. Խ. Ճ. 20, Բ. Ա. 150՝ Ընկ. Պ. 100. Պ. Մ. Շ. 20, Մ. Դ. Բ. 5, Կ. Տ. Մ. 10, Ա. Գ. Ա. 30, Յ. Ե. Յ. 50, Դ. Տ. Կ. 30, Վ. Յ. 60. Ս. 40՝ Ն. Գ. Տ. Ճ. 20, Յ. Կ. Տ. Յ. 20՝ Կ. 20, Ա. Մ. Ա. 50, Ա. Տ. Դ. 10. Վ. Դ. 30, Ե. Ա. Դ. 50, Մ. Ս. Ե. 50, Դ. Դ. 10, Ճ. Խ. Դ. 20, Բ. 10, Ս. Բ. Ս. 10, Ա. Ճ. Կ. 10՝ Մ. Մ. 20, Ա. Մ. 50, Ա. Գ. Յ. 50: Դումար 2665 դրամ:

ՄԵՆԱՒՈՐԻՑ 1906 Օգոստոս ամսում հեռեւեալ խմբերից՝ Կայծակ անդամավճարներ 40 դրամ, Զանգի ժայռ 60, Անոյշ 28. 25, Պատանի 40: Գումար 168 դրամ 25:

1906 Ապրիլ ամսում հեռեւեալ խմբերից՝ Զանգիժայռ 103. 80, Պատանի 70, Արտաւազդ 100, Կայծակ 30, Անոյշ 67, մի հարսանիքում հանգանակուած 43, Հարսանիքում հանգանակուած 37. 50: Գումար 451 դրամ 30:

1906 Մայիսին հեռեւեալ խմբերից՝ Դումանի 410· 40, Անոյշ 38. 10, Կայծակ 62, Ցասմիկ 28, Զանգիժայռ 104. 10, Պատանի 29. 70, Ռազմիկ 50. 50, Զանգիժայռ խմբից ուէր 47, Աւտազից 15 ամեակի հաշկերոյթի առթիւ ուէր 77· 15, Կայծակ եւ Անոյշ խմբերից 15 ամեակի հաշկերոյթի առթիւ ուէր 100, Արտազում եւ Բլուրում հանգանակուած № 63 թերթով 1264: Գումար 2110 դրամ 35:

ԱՒԱՐԱՅՐԻՑ 1906 Յունուարի №54 թերթով հանգանակուած՝ Ոմն 100, Սարգիս 20, Սոկրաս 30, Մարո 20, Ա. Ա. 20, ոմն. 12, Գարեգին 10, Վահագն 10. Սիմոն 10, Վասպուրականցի 20, Գրիգոր ման 10, Ռուբագ 10, Գալիլիացի 20, Կ. Պ. 20, Բաբա Բէն 10, Սեփանով 5, Զ. Մարգար 4. Հայրապետ Վ. Ե. 20, Առաքելեան 10, Մարիամ Ա. Ա. 6, Պետրոս Ս. 10, Սուրէն 10, Կ. Մարգար 6, Մ. Մ. Օհան 12, Յակոբ 4, Օհան 4, Սարհաս 10, Օ. Հախնազ 10, Դաւաշ 10, Թարո Յակ· 4, Սարդար 12, Ասլան 6, Տիկին շաբար 10, Մորուշ 15: Գումար 490 դ.: Անդամավճարներ հեռեւեալ խմբերից՝ Խան 182, Սերոբ-փաշա 155. 50, Հրայր 136. 50, Սօսէ 121, Վարդան 34: Գումար 579 դրամ:

ՎԻՆԻԺ ԿՈՄԻՏԷԻՆ 1906 Յունվար 1-ից մինչեւ 31. Օգոստոսի: Հեռեւեալ խմբերից՝ Շաւշ 200 դրամ Բեռի 50, Խան 88, Անդրանիկ 76. 40, Աւեսիսեան 51, Ծիրանան 184, Վազգէն 74, Սերոբ փաշա 87, Փաշա 25, Սերոբ 15, Աղբիւր 670, Վազգէն II 14, Յոյս 486, Մուրաս 205, Կայծակ 92, Յառաջ 21, Մերի գիւղ Ծիրակոյս 19, Վառօդ 15, Փարոս 17, Արծիւ 18. 50, Անառիկ գիւղ Անդրանիկ 38, Արծիւ 7. 30, Երասխ 15. 40, Դարբին 28. 75, Բազէ 9· 50, Վարդաշէն 26. 50, Թումանի 25, Սէր 20, Փոխիկ 203, Արիս 705. Աւեսիմ մանգալուց 1580, Քրիստափոր Միքայէլեանի հոգեհանգստի պսակ 160, Մասրիցա 60, Հին ապառիկներից 65, Մ. Տ. Մ. ուէր 20, Սերոբ խմբից ուէր 6, Տ. Կտրուկից դստեր հինգամեակի առթիւ 10, Զուլուում խմբից 18, Բաբգէն Սիւնի խմբից 12, Ընկերական դասասանից Ն. Յ. ից 150, 1905 թ-ի Կայծակ խմբի անդամավճարներից 40, Նուէր Պ. Բ. ից 10, Մի ներկայացումից 236. 75, Նուէր լեհացուց 50, Անդամավճարներ 170, Նուէրներ ստացած 43, Հանիմ գիւղ 4 խմբից 83. 50, Նուէր եւ տուգանք 33, Ծերպ գիւղ 9 խմբերից եւ ուէր 64, Թոնդանոբ գիւղ 4 խմբերից 24. 80, Սար գիւղ 3 խմբերից 32. 25. Վանիմ գիւղ 5 խմբերից 47. 65, Վարանդ գիւղ 5 խմբերից 84. 5, Սարահարթ գիւղ 7 խմբերից 119. 25, Սեին գիւղ 5 խմբերից 46. 10, Բեղա գիւղ 4 խմբերից 16. 80, Լաոշ գիւղ 4 խմբերից 40. 20:

Ընդհանուր գումարն է 13272 եւ 30:

Մ. Ֆ.-ի Կ. Կոմիտէն՝

1906 փեբրուարի հաշիւ:

Համար 182 հոկ. նոյ· դեկ. 13 ռուբլի 50 կոպ. համար 186 հոկ. նոյ. դեկ· 12, Սօճ զար 10· 50, նոյն 9, համար 14 նոյ. դեկ. 6. 65, համար 11 դեկ. 2. 85, համար 42 նոյ. դեկ. 3· 60, Սկոյից դեկ. 12. 90, Արշալոյս մինչեւ յուն. 5 85, նոյն յուն. 1. 50, Հրայր՝ հոկ. յուն. 13· 50, Օժ. լալար նոյ· դեկ. 15, Օժ. ծալկա հոկ. նոյ. 12. 50, Արձագանգ հոկ. դեկ. 18. 50, նոյն 13. 20, համար 5 յուն. 4. 40, համար 7 օժ. անդ. փեռ. 2, համար 7 Տ. եւ Գ-ից նոյ. դեկ. 8, համար 1 նոյ. դեկ. 8. 20, համար 5 նոյ. դեկ. 8. 50, համար 4 հոկ. նոյ. դեկ. 12. 60, համար 161 հոկ. նոյ. յուն. 43, համար 281 Համրիկ յուն. 18, Օժ. ան. Ս. Մ-ից յուն. 5, համար 191 Կռունկ սեպ. 7. 70, համար 192 Բողոտ սեպ. 2, համար 193 Սօխակ սեպ. 5. 10, համար 195 Ալիք սեպ. 11, համար 198 Արշաւանք սեպ· 3· 40, Զնդան սեպ. 6. 30, Արաքս սեպ. 3. 60, Մասիս սեպ· 5. 40, Կռնակ փեռ. 2. 20, Ամի բ. խմբ. նոյ. յուն. 16, Ոսկի հոկ. նոյ, 19, Քնար նոյ. 8, Լոյս նոյ. դեկ· 16, Ճարպիկ դեկ. 5. Ոսկի օժ. անդ. քառից նոյ. 2, Ոսկի օժ. անդ. Զոնգուրից նոյ· 2. Ոսկի օժ. անդ. Կ-ից հոկ. դեկ· 3, համար 45 մինչեւ յուն· 2. 70, համար 15 մինչեւ յուն. 4. 75, Մոծակ յուն. 3, համար 16 յունիս, օգոս. 6, Հրաբուխ յուն. 5, Տօգօ յուն. 8, համար 13 մինչեւ յուն. 7. 60, համար 64 նոյ. դեկ. 7· 75, համար 86 նոյ. դեկ. 4. 80, համար 81 գ դեկ. 2. 25, համար 87 նոյ. դեկ. 5. 10, համար 84 դեկ. 3. 50, համար 12 սեպ. 7. 10, Զարթ նոյ. 6. 40, Ծաղիկ նոյ. 4. 45.

(Կը շարունակուի)